Փ

[illegible]

Փ N



Յովհ.

Յարութ.

32

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]:

[illegible]:

[illegible].

[illegible]:

[illegible]:

[illegible] -

[illegible]

[illegible].

[illegible]:

~~[illegible]~~

---

[illegible]

[illegible]

# ՆՈՒԱԳԵՐԱՆ ՋԵՕՍԱՆԱՑ

ԱՌ

'Ի ՊԷՏՍ

ԱԶԳԱՑԻՆ
ԽՐԱԽՃԱՆՈՒԹԵԱՆ

'Ի ԿԱԼԿԱԹԱ

ՅԱՐԱՐԱՏԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ
1846

1857-IV-6

# ՆԱԽԱԲԱՆ

՚Ի ՄԱՐԴԿԱՅԻՆ կենցաղավարութեան՝ արդարեւ ո՛չ սակաւ քաղցրանաց խրախճանական հանդէսն զարդարեալ Սիրով. որով մարդիկ՝ ո՛չ միայն մոռացեալ զաշխարհային բազմադիմի վիշտս՝ զմայլեալ բերկրին, և խնդութեան հոգւով վայելեն դոյզն ինչ զբօսանս երջանկութեան, այլ և՝ շահին զբարեկամս, զմերձաւորս և զսիրելիս, որք համարին հոգաբարձուք և կարեկիցք միմեանց, ըստ որում բնութենակիցք. զի անկատար է սէր առանց ընկերակցի, և համր է լեզու թարց խօսակցի. և որպէս այս կարեւոր և օգտակար է մարդոյ՝ սոյնգունակ հարկաւոր է առարկայ իմն զուարճալի և անմեղ զբօսարանաց՝ առ ՚ի կատարեալ լինելոյ նորին։ Ամօք յառաջ հաւաքեալ տպագրեցաւ այս Տա-

դարան մի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ անուն, զոր ամենեքեան քաջ ճանաչեն. սոյնպէս վասն սպասաւորութեան նորին՝ ընդ հնութեան ժամանակին և առ ժամեայ՝ սպասաւեալ էին գրեթէ բոլորն. և առ որեւք դէպ լինէր խրախճան Պապուէլի Հասարակութեան Մերազանոյ՝ զգալի լինէր պայծառութիւն օրհնեալ Տաճարին. Այն իրի հաւաքեալ ամփոփ և ամփոփ քանի մի աշխարհէ երգս՝ խառն ընդ զուարճաբանական խաղուք Աշխէս, նպաստաւորութեամբ փղէ-յա յաստիճանեայ ՚ի դէպս յանկարծակի. յուսամ ո՛չ այլ ինչ՝ եթէ ո՛չ խաղաղ, քաղցր և անոյշ գործածութիւն, որ լիցի փառք Սիրոյ և անուշից ըմբերակցութեան.

# ՆՈՒԱԳԱՐԱՆ

## ՁԲՕՍԱՆԱՑ

### ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ։

Օրհնեա՛ Տէր զայս ամուսնութիւն
(Անուան հարսին և փեսային)
Եւ պարգևեա՛ վայելչութիւն,
Ընտանեաց նոցա՝ ընդ նոսին։

Ցարատևեա՛ երջանկութիւն,
Մինչ 'ի վախճան կենաց սոցին.
Եւ տո՛ւր սոցա Որդէծնութիւն,
'Ի յիշատակ նախնեաց սոցին։

Եւ այսպիսի ուրախութիւն,
Արժան արա՛ նաև նմանեաց.
Որք ունին յայժ կարօտութիւն,
Առնուլ ճաշակ սուրբ հարսանեաց։

### ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ։

Սուրբ լերուք հարսն եւ փեսայ ,
Որք ընկալայք շնորհ գերակայ ․
Ձեր օրհնութիւն անանցական ,
Պահելոց է ձեզ անսասան ։

Վասն այս ձրի մեք յոյժ ցնծամք ,
Որ եմք մեք ձեր սերտ բարեկամք ․
Սակս այսորիկ ըմպեմք զբաժակ ,
Ուրախանամք մեք անկատակ ։

Խնդրեմք 'ի Տեառնէ ձեզ պճնեսցէ ,
Պտղօք բարեօք զարդարեսցէ ․
Մինչ 'ի խորին ձեր ծերութիւն ,
Պարգեւեսցէ բարօրութիւն ։

### ԵՒ ՁԵԶ ՑԱՆԿԱՄ ։

Գոհ եմ զձէնջ ընդհանրական ,
Յիշել զայս օր ուրախական ․
Որով գտի մխիթարութիւն ,
Ստանալոյ ձեր հաճութիւն ։

Պարտական եմ ձեզ մշտապէս,
Պահել սրտիս հաստատապէս.
Ձերոց քաղցրիկ ընկերութիւն,
Որ պատճառեաց մեզ ցնծութիւն։

Յիշէք զայս օր ազնիւ Տիկնայք,
Յիշէք և դուք միշտ՝ Օրիորդք.
Եւ դուք յիշէք Երիտասարդք,
Որք եղայք ինձ բանիս յորդորք։

Տայէ ինձ Տէր յաջողութիւն,
Եւ ձեզ ցանկամ զայս հաւասար.
Միշտ ընկալնուլ ձեզ գովութիւն,
Մնամ ես ձեր ծառայ————

ՑՆԾՈՒԹԻՒՆ ՍՐՏԻ։

ՑՆԾՈՒԹԻՒՆ սրտի այս խմբի մերոյ,
՚ի գործ և ՚ի դէմս է տեսանելի.
Թէ որքան խնդամք բերկրութեան ձերոյ,
Համարեալ զայն մեզ անորոշելի։

Վասն որոյ սիրտ մեր լի ուրախութեամբ,
Անհամբեր առնէ մեզ զայս երգ առնել.

«Քանզի չէ օրէն բազմիլ լռութեամբ ,
Թարց խնդակցութիւն մեր խոստովանել ։

Նա և զայս պաշտօն բարեկամական ,
Հարկաւոր է մեզ այսու ցուցանել .
Զի վասն մանկան ձեր եմք պարտական ,
Խնդրել 'ի Տեառնէ զարգացուցանել ։

Ընդ ծընողաց ձեր երկար կեանք յուսամք ,
Պատեալ մշտապէս այսու խնդութեամբ .
Եւ մեք՝ որ եմք ձեր հաստատ բարեկամք ,
Տեսանել զայն միշտ յոյժ ուրախութեամբ ։

## ՄԱՔՈՒՐ ԳԻՆԻ ։

ԵԿԱ՛ՅՔ եղբա՛րք առնումք բաժակ
Սիրոյ մերոյ վայելչութեամբ .
Առէք զգինին , լըցէք զբաժակ ,
Եւ ըմպեցէք ախորժութեամբ ։

Զի ոչ գիտեմք վաղուեան աւուր
Զի՞նչ ցաւ ունէ մեզ բերելոյ .
Վասն որոյ մինչ հաւաքեալ կամք ,
Ջանամք յաւէտ մեզ բերկրելոյ ։

Ժամանակաց և մեր բնութեան ,
Որոց չունիմք առնել հրաման ·
Զի չեն կամաց մերոց տուեալ ,
Կամիլ , բերել , տալ առ ժամայն :

Զգաստ կացէք մինչ խոստանան ,
Ձեզ այս աւուրքս ուրախական ,
Վայելելոյ 'ի միասին ·
Զի մի՛ տրտմիք սակս այս մասին :

Բարձէք 'ի ձէնջ զխռովութիւն ,
Եւ կամ ելէք 'ի խմբից մեր ·
Զի սիրտ լցեալ ազնուութեամբ ,
Խօսելոց է միշտ վայր 'ի վեր :

Մաքուր զինին վարելոց է ,
Զախտ ներմնայնոց՝ որ գխզեալ կայ ·
Զի սիրտ սուրբ ըստ նախկին բնութեան ,
Սրբեալ մնայ միշտ յարակայ :

Բարձրացուցէք բաժակ լցեալ ,
Եւ սերտ սրտիւ երկրորդեցէք ·
Բանս իմ , զարմն երթամ յիշել ,
Ապա սիրով ճաշակեցէք :

Նորոգութիւն Տանն ՀԱՅՈՑ ,
Աններկայ մեր Բարեկամաց ·
Պարծանք Ազգիս Ներկայ Տեկնաց ,
Եւ այս խմբեալ միակամաց ։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ։

ԸՄՊԵՄՔ զբաժակս մեք յոյժ սիրով ,
Առ Տէր մաղթեմք զայս խնդրելով ·
Քեզ զերկար կեանս պարգեւելով ,
Միշտ քեզ լիցի Տէր ապահով ։

Նաեւ տայցէ քեզ ողջութիւն ,
Եւ գործոց քոց յաջողութիւն ·
Ընտանեաց քոց ուրախութիւն ,
Եւ մանկանց քոց զարգացութիւն ։

Մ՛է երկմտիր 'ի քում սրտի ,
Թէ զիս առնեմ քեզ հաճելի ·
Այլ յիսըն լեր դու հաւատով ,
Ցանկամ ժամու յամենայնի ։

## ԱՌ Ո՞ՒՄ ԴԻՄԵՄ ։

Զարդ կենաց իմ, պարծանք և փառք ,
Դու ես միայն , և ո՛չ այլ ոք ․
Թարց քո անձն իմ է լոյժ անարգ ,
Ոչ ոք ունիմ , զի տայ ինձ հոգ ։

Ճրագ ես դու անձին իմոյ ,
Լինիմ խաւար , թէ հեռասցիս ․
Սիւն , լոյս , և սէր սրտի իմոյ ,
Առ ո՞ւմ դիմեմ թէ նեղասցիս ։

Կամ հա՛տ կեանս իմ , կամ ապրեցո՛ ,
Եւ կամ ցո՛յց ինձ այլ ճանապարհ ․
Որով անձն իմ լոյժ զօրացո՛ ,
Զի մընասցից անդորրաբար ։

Յիշատակ է այս քո սիրոյ ,
'Ի . . . . . . ( Որոց անուն չէնէ , )
Սէր քո քաղցրիկ ինձ արբեցո՛ ,
Որքան կեանք իմ յաշխարհիս է ։

## ԱՍԷ ԲՆՈՒԹԻՒՆ ։

՚Ի ԾԱՂԿԱՆՑ ասէ բնութիւն ,
Ունիմք գիտել զբեր ծառոյն .
Է՞ր ոչ կրեց ազդեցութիւն ,
Գիտել պարտիմք սրոյ հանգոյն ։

Տես զխօսնակ ակունք արթուն ,
Որք լռութեամբ յայտնի առնեն .
Բանք ներքնայնոց թէ և ծածկեալ ,
՚Ի ներս սրտի՝ որ անցանեն ։

Ոչ ինչ ունիմ պահանջելոյ ,
Յաւել քան զայն՝ զոր տեսանեմ .
Արփին զիմացդ , որ սէր հոսէ
Մաքուր մտօք՝ քանզի գիտեմ ։

Բայց լեր հաստատ զառեալն ՚ի քէն ,
Պահելոյ եմ միշտ մաքրութեամբ .
Ջանալով զի արժանայցեմ ,
Ապրել յաւէտ քոյդ հաճութեամբ ։

## ՄԻ՛ ՄՈՌԱՆԱՐ ։

ՎԻՐԱՀԱՐԵԱԼ եմ քոյ սիրով ,
Սիրտս կիզեալ ուժգին բոցով .

՚ի սիրոյ քոյ ծնամ լալով,
Մ՚ի՛ մոռանա՛ր իմ Սիրելի՛։

Զարթնում ՚ի քնոյ առ քեզ կարդամ,
Համայն սրտիւ կեալըդ ցանկամ.
Զի տեսից քեզ յամենայն ժամ,
Մ՚ի՛ մոռանա՛ր, իմ Սիրելի՛։

՚Ի խաւարել՝ արեգական,
Ոչ դադարէ սէրն իմ այնքան.
Զի ննջեցից անդորրութեամբ,
Մ՚ի՛ մոռանար, իմ Սիրելի՛։

Իւր՞ ես այդքան խստասիրտ լեալ,
Երբեք չկամիս ինձ ողորմալ.
Սէր իմ, սէր իմ, կեանքս է աւա՛ղ,
Մ՚ի՛ մոռանա՛ր, իմ Սիրելի՛։

## ԿԵԱՆՔ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ։

ԿԵԱՆՔ ուրախութեան եկա՛յք վայելեմք,
Մինչ եղծ բնութեան առ մեզ տեսանեմք.

Օր տարաժամ, օր միգացեալ,
Օր համայնից տուող վախճան,

Ու դրունս ունիմք յառաջ եղեալ,
Փութա՛ գործել ընդ մեզ դարան։

Կեանք ուրախութեան, և այլն։
Ու ի՞նչ օգուտ յաւել աշխատ,
Մինչ պէտք կենաց 'ի չար ածի·
Որոց ստացուածն՝ թէ չիմք պարապ՝
Ու ձեռն ունիմք միշտ պատրաստ։

Կեանք ուրախութեան, և այլն։
Դի՛ք ցանկութեան չար և կանոն,
Երջանկութեան հետևելով·
Զի ագահից տաժանաց խղճ
Ինքեամբ թաղի մեռանելով։

Կեանք ուրախութեան, և այլն։
Քանզի կարծիք ունել անչար,
Է լոկ ընթացք առ բերկրութիւն·
Բայց ոչ գիտեն, զի այդ սոսկ միտք,
Բերելոց է թշուառութիւն։

### ԹՈ՛Ղ. ԶԻ ՄՆԱՍՑԷ ։

Ընդէ՞ր պարտիմ տգիտաբար ,
Յայտնել սէրն այն , որ զիս վառէ .
Եւ կամ զանուն՝ որ ՚ի թագուստ ,
Սիրտ իմ ցայս վայր պահեալ ունէ .

Քանզի փոքունք են ըղձալոյ ,
Զայն զոր կրեմ սիրելութեամբ .
Եւ թէ տացէց ծանօթութիւն ,
Խօսելոյ են կատակութեամբ ։

Յորժամ զնա յիշումն ածեմ ,
Ըղձայարանքս կենդանանան .
Եւ ՚ի տեսլս մըտաց իմոց ,
Համայն բարիք հանդիսանան ։

Մինչ անկեալ կամ ՚ի տրտմութիւն ,
Արտասուք իմ յարգելս պահէ .
Եւ մինչ մատնեալ ՚ի նեղութիւն ,
Ցաւք իմ դիւրաւ դիւր անցանէ ։

Մի՛ թէ պարտիմ տալ տխմարաց ,
Տեղի խօսից վասն այս անուան .

Որ 'ի բոլոր ժամըս կենաց ,
Ինձ կազդուրէ և տայ դարման ։

Թո՛ղ զի մնասցէ միշտ սրբութեամբ ,
Փակեալ 'ի սիրտ իմ տրտմութեամբ .
Եւ ո՛չ յիշի անօգտաբար ,
Բայց միայն յաղօթս և 'ի մաղթանս ։

---

## ԶԱՅՆ ԶՕՐ ՈՒՆԻՄ ։

ՄԻՆՉ պարապիմ սակս սիրելւոյս ,
Ջանք և աշխատ միշտ քաղցրանան ,
Թէ և իմ բախտ չաջողեսցէ ,
Սիրտ իմ և միտք ո՛չ զըլանան ։

Ընդէ՞ր տարխամ անչափ շահուց ,
Եւ կամ անսամ ձայնի փառաց .
Մինչ ո՛չ հերքէ զայն՝ զոր ունիմ ,
Նա՛՝ որ սիրտ զիմ ունի վառած ։

Ժամանակըն անցանելով ,
Թողու զհետ լոկ յիշատակ .
Անցեալ կենաց և յանցանաց ,
Յիշողութեան մեր Նպատակ ։

Ցաւէտ հաճիմ յաղքատութիւն ,
Պատեալ սիրով և մաքրութեամբ .
Քան զանհամար հարստութիւն ,
Լցեալ անոտի փարթամութեամբ ։

## ԵՐՋԱՆԻԿ ՎԱՐԴ ։

ԵՐՋԱՆԻԿ վարդ , մինչ բնութիւն ,
Քեզ պահպանէ զինաւորեալ .
Ընդդէմ նոցա որ անպատրաստ ,
Դիմեն առ քեզ ըղձիւ վառեալ ։

Գոյն քոյ ախորժ , հոտ քո զմայլիչ ,
Տիս քոյ յաւէտ բերկրեցուցիչ .
Ոչ խնայէ սակս վայելման ,
Որք յարգութեամբ քեզ մերձենան ։

Տես զսոխակ՝ որ անդադար ,
Առ քեզ ձայնէ սիրով վառեալ .
Անկեղծ սրտիւ՝ մաքուր մտօք ,
Կեանս իւր ունի քեզ նուիրեալ ։

Ո՜հ թէ ո՛րքան պարտիմ ջանալ ,
Օրինակաւ քով ընթանալ .

Զի սէր սուտակ, և սիրտ նեխեալ,
Ցինէն ՚ի բաց ձեան հերքեալ ։

### ԵԿԱՅՔ ԱՌ ՈՐՍ ԵՐԹԱՄՔ ։

ՄՈՒԹՔ գիշերոյ խոնարհեալ՝ տան
Ծագել լուսոյ առաւօտու ·
Շունք որսորդաց ազդեալ խնդան, (Կրկնել)
Մինչ տեարք զփողն հնչեն ազդու ։
Եկայք առ որս երթամք · ( Զօրէօ )

Կանայք՝ զարանց պարանոցաւ
Անկեալ, ջանան արգելելոյ ·
Անձրև՝ կարկուտ և հողմ սկսաւ, (Կրկնել)
Չէ հնար՝ ասեն՝ ձեզ որսալոյ ։
Թող մեզ առ որս երթամք · ( Զօրէօ )

Անընակ աղուէսն կայծակնանման,
Փախչէ փրկել համայն հնարիւք
Զկեանս, որոյ զհետ երթան, ( Կրկնել )
Հետապօտքըն բազում ջանիւք ։
Եկայք առ որս երթամք · ( Զօրէօ )

Տես թալկացեալ չկարէ փախչել,
Թէ և ըղձիւ յառաջանայ ·
Հասին որսորդք եռուն արգել, (Կրկնեա՛)
Նաև կենացն վախճան և կայ ։
Եկա՛յք առ տունս երթամք · (Զօրէն)

Ահա՛ բազմեմք սեղան սիրոյ,
Եւ վայելեմք խրախճանութեամբ ·
Պարգև կենաց բնութեան բերոյ, (Կրկնեա՛)
Եւ հանգստեմք խաղաղութեամբ ։
Եկա՛յք գինով խնդամք · (Զօրէն)

ՎԱՐՔ ՀԱՄԵՍՏԱԲԱՐՈՅ ։

ԹԱԳՈՒՀԻԴ ազանց սեռին իգական,
Ունելով յանձին զարդ իմաստական ·
Եղեր օրինակ դու 'ի մէջ մարդկան,
Ո՞վ քեզ նմանի վարուք գովական ։

Կայտառ դու շարժմամբ և պատրաստական,
Արիդ ինքնազէն՝ որպէս զօրական ·
Շուք դու ընկերացդ և հաճոյական,
Սէր, քեզ հետևողն չէ մերժական ։

Յօկուհե՜նդ համեստ և արխական ,
Լըցեալ հանճարով և խոհեմական .
Ընկա՛լ դու յինէն զայս գով լըջական ,
Բերկրեցեալ սրտիւ և յօժարական :

---

## ԼՈ՛ՒՐ ԻՆՁ ԱՂՋԻԿ :

ՀԱ՛ՅԵԱՑ սիրով , հայեա՛ց սէր իմ ,
Եւ քաղցրութեամբ լո՛ւր ինձ Ա՛ղջիկ .
Զի 'ի սիրոյդ վիրեալ կոծիմ ,
Վասն այն սիրտ քո տո՛ւր ինձ , Ա՛ղջիկ :

Սոխակն 'ի հոտ բացեալ վարդոյն ,
Զմայլեալ խսպառ մընայ յամպոյն .
Եւ դու կեա՛նք իմ , որոյ հանդոյն ,
Հոտս անուշից բո՛ւր ինձ , Ա՛ղջիկ :

Տե՛ս ղթրթրիկն սիրով վառեալ ,
Ըզլապտերաւ լինի կիզեալ .
Սոյնպէս և դու յիս գթացեալ ,
Սիրոյդ արա՛ կուր զիս , Ա՛ղջիկ :

Խօսնակն սիրով լըցեալ ձայնէ,
Եւ զծագումն լուսոյն ազդէ.
Ցայգ և ցերեկ սոյնպէս վառէ
Սէր քո երբև հուր զիս, Ա՛ղջիկ։

Սաստիկ ցաւօք տքնիմ անճար,
Նայեա՛ց առ իս գթածաբար.
Զի խոցեալ է անխնայաբար
Սէր քո, որպէս սուր զիս, Ա՛ղջիկ։

Կարօտ սիրոյդ ուժգին պասքեալ,
'Ի ձեռս մահու կա՛մ դեգերեալ.
Դու որպէս ամպ յերկնից իջեալ,
Տո՛ւր փրկութեան ջուր ինձ, Ա՛ղջիկ։

## ԿԵՆԱՑ ԻՄ ՅՈՅՍ ։

Դո՛Ւ՝ որ ծագմամբն արեգական,
Վանես զմութ գիշերական.
Խնայեա՛ ուրեմն առ իս գթալ,
Եւ գըթութեամբ յիս ողորմալ.
Թո՛րց քո չէ հնար յինէն բառնալ
Այն մեգ որ զիս ունի պատեալ։

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Դու՝ որ շնորհես զվառեկաց ,
Անել տեղէ՝ ածել 'ի բաց .
Գթա՛ ուրեմն խաւարելոյս ,
Օժանդակեա՛ և ա՛ծ 'ի լոյս .
'Ի քէն կախի բոյժ իմ ցաւոյս ,
Քանզի չունիմ ուստեքէ յոյս :

Վասն այն նեղեալ առ քեզ դիմեմ ,
Եւ ցաւ սրտիս քեզ բողոքեմ .
Հայեա՛ց ուրեմն թշուառելոյս ,
Եւ հաճեա՛ց դու տալ ինձ խրախոյս .
Զի 'ի քէն է կենաց իմ յոյս ,
Եւ քեւ յուսամ առնել ինջոյս :

ԼՈՅՍ ԱՉԱՑ ԿԱՐՕՏԻՄ :

'Ի ՍԻՐՈՅԴ բորբոքիմ ,
Դեգերեալ մորմոքիմ .
Ո՛ւր ես դու խօսնակ իմ ,
Եկ կեցո՛ զանձըն իմ : ( Կրկնեա՛ )

Լոյս աչայս կարօտին ,
Տեսանել վերային .
Պատկերըդ երկնային ,
Սիրափելդ երկրային : ( Կրկնեա՛ )

Յուսահատ շուարիմ,
Անձնահատ նուաղիմ.
Թէ և մահ ընդունիմ,
Ի սիրոյդ ոչ խորշիմ։ (Կրկնէ՛)

## ՄԻԱՅՆԱԿ ՀՐՋԻՄ ։

Մինչ յերբ համբերեմ բախտիս խստութեան,
Մինչ յերբ արտասուօք և տրտում շրջիմ.
Եւ մինչ յերբ յանյոյս մտածողութեան,
Կեանք իմ, վասն քոյ ողբալով ննջիմ ։

Անհանգիստ մտօք ցաւիմ յարաժամ,
Եւ լուռ հայեցմամբ պապանձի լեզուս.
Ո՜հ. զի՞նչ արարից, զի միւսանգամ
Արժանի եղէց գրկել սիրելւոյս.

Կամաւ ուխտեցից կեանք իմ նուիրել,
Թէ յաջողէ ինձ այս լոկ ցանկութիւն.
Յայնժամ մահըն իմ սիրով ընդունել,
Քանզի լրանայ այս կարօտութիւն ։

Խղճա՛ ուրեմն դալար հասակիս,
Պատճառաւ սիրոյդ վհատեալ է յոյժ.

Միայնակ շրջիմ նման տատրակի ,
Միայնակցութեանս դու լինիցիս բոյժ ։

Կեանք իմ անցանէ , սաստիկ տխրութեան ,
Կարօտիւ ձեամ քաղցրութեան սիրոյդ .
Մինչ յորբ կրեմ զցաւ ՚ի պանդխտութեան,
Շրջիմ խելագար , գտեց նման քոյդ ։

## ԿԵԱՆՔ ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ։

ՄԻԱՅՆԱԿ նստեալ մինչ բազում ունիմ ,
Կեանք պանդխտութեան սիրով ընդունիմ .
Այլ զինչ արարից . քանզի ոչ գոյ ճար ։

Ըստ որում բախտի անգութ խստութեան ,
Ոչինչ կարէ տալ առիթ մեղմութեան .
Ուրեմն համբերել խրատէ մեզ հանճար ։

Եւ համբերութիւն թէ երկայն տեւէ ,
Երկայնմտութիւն ինքն հետեւէ .
Որոց քաղցրութեան արդ զփորձ ունիմ ։

Զի խոկմամբ թէ կամ ՚ի մըտի նոցին ,
Ոչ յաւել թուիմ լինել առանձին .
Որով զայս կեանս իմ սիրով ընդունիմ ։

## ԳԻ՛Թ ՑԵՐԱԶԻ ։

Մինչ տիւն 'ի մէնջ 'ի բաց գընայ ,
Գիշերն տիրէ մեզ մըթութեամբ .
Եւ մինչ բնութիւնըն պահանջէ ,
Նորոգութիւն հանգստութեամբ .
Զըջիմանգուղ խելագարեալ ։ ( Կրկնեա՛ )

Մինչ թալկացեալ նիրհել ջանամ ,
Հոգւոյս աչաց ձեւակերպի .
Պատկեր նորա՝ յորոյ սիրոյն ,
Սիրտ իմ գերեալ յար տագնապի
Ուժգին սիրով վիրաւորեալ ։ ( Կրկնեա՛ )

Տեսանեմ զի փայլակն ականց ,
Մածեալ սիրով առ իս շանթէ .
Եւ ձայն նորին գերբընական ,
Ինձ դարմանէ յաւել քան թէ
Բուժ բժշկաց գեր կատարեալ ։ ( Կրկնեա՛ )

Մինչ աչք իմ ընդ ականց նորին ,
Յառեալ ապշեն տատամսեցեալ .
Սիրտ իմ կրէ զայն զգայուածն ,
Որ սիրելեաց է հանդերձեալ .
'Ի բնութենէ պարգեւեցեալ ։ ( Կրկնեա՛ )

Որովհետև այս է բախտ իմ,
Թո՛ղ մութք իցեն ինձ վիճակեալ.
Գէթ յերազի ճաշակեցեմ
Զայն ցնծութիւն, յորմէ զրկեալ
'Ի տուընջեան՝ մնամ պասքեալ։ (Կէռնէր)

## ՍԻՐԵԼԻ ԲԱԶՄԱՑ։

Զա՛րդ ընկերաց քոյ համեստաբարոյ,
Առաքինազարդ դուստրդ հանճարոյ.
Բաղցրաբար վարուք սիրելի բազմաց,
Հասակաւ մանուկ կատարեալ կամաց։

Տիրուհեդ խելաց յաւէտ քան զմարդ,
Բաղցրութիւն սեռիդ ունելով քեզ զարդ.
Գթութիւն սրտիդ կատարելութեամբ,
Ողբամք յարաժամ կորէ՛ դառնութեամբ։

Ե՛րթ դու. Աննայէ փոխան դառնութեան,
Ընկա՛լ 'ի վերուստ զԹագ կուսութեան.
Ո՛չ է քեզ օտար աղերս հեղինակ,
Ա՛յն զոր սիրէիր եղբօր փոխանակ։

Կենացն քո ցանկայր բազում եռանդեօք,
Լուայ վախճանիդ զերեսդ արտասուօք։

## ՀՈԳԻՈՅՍ ՏԻԿԻՆ ։

Մի՛ նայիր առիս , քա՛ղցրիկ Տիկին իմ,
Ակունքըդ սիրուն գերեցին սիրտ իմ.
՚Ի զո՛ւր փախազիմ, ՚ի զուր տաղնապիմ,
Խոցեալ ՚ի սիրոյդ՝ ՚ի զո՛ւր մեռանիմ ։

Մինչ ոչ արժան եմ, ոչ զբաղդ ունիմ,
Ոչ խղճալ կամիս ՚ի փրկել զանձն իմ,
Զի մի՛ ընդունայն ՚ի ցաւոյդ մաշիմ,
Յոգւոց հանելով տամ ո՛րդ զոգի իմ ։

Եթէ աղաչանս , և թէ արտասուս ,
Կամ թէ պատարագ՝ քեզ մատուցանեմ,
Բաւ են լինելոյ զսիրտ քոյ ընդել,
Զի զութ շարժեցես ՚ի փրկել զանձն իմ ։

՚Ի ծունըր կրկնեալ առ քեզ պաղատիմ,
Արտասուօք լցեալ հոգւո՛յս Տիկին իմ,
Խնամեա՛ , խղճա՛ , գըթա՛ և փրկեա՛ ,
Դի՛ր զիս ՚ի սրտիդ , և կեցո՛ զանձն իմ ։

Եթէ զայս համայն ընդ վայր համարիս ,
Սիրտ քոյ քարացեալ միշտ մնայ վան իմ,
Ուրեմն աղաչեմ, մի՛ նայիր երբէք
Ոչ միայն առիս , այլ ոչ յատուեր իմ ։

## Ա՛Ռ ԶԱՒԵԼ ։

Լ.Ա՛Ւ Տիկնայք և Պարոնայք առէք զիմ աւել,
Զի յարմար են նոքա 'ի սենեակս պահել ·
Բերի զայն ես յուսով 'ի Գերմանիոյ ,
Զի աղքատ աղջըկան լիջիք ձեռնտու ։
Ա՜ռ զաւել , ա՜ռ զաւել , ա՜ռ զաւել
յաղքատ աղջկանէն ։

Պարոնայք ինձ հաղիպեալ ասեն , կա՛յ աղջիկ ,
Վաճառես դիւրագին զաւելս քո , քաղցրիկ ·
Տիկնա՛յք դուք եւս առէք, են յոյժ պատուական,
Ո՛հ առէք դուք զաւելս աղքատիկ աղջկան ։
Ա՜ռ զաւել , և այլն ։

Եւ յորժամ յիմ յերկիր դառնամ վերստին ,
Քաղցր են ինձ բարեկամք Թողուլ ձեզ ցաւիմ ·
Յիշեցից զերախտիս ձեր ես յաւիտեան ,
Զի շնորհս արարիք աղքատիկ աղջկան ։
Ա՜ռ զաւել , և այլն ։

## Ա՛Ռ ԶԱՄԲԻՒՂ ։

ԳԻՒՂԱԿԱՆ աղջիկ եմ ես զամբիւղաշէն ,
Եկեալ աստ զամբիւղովք 'ի Հայոց երկրէն ·

Յուսամ զի Հայ Տիկնայք և Պարոնայք Հնդկաց,
Բարձըր զին տային իմ սիրուն զամբիւղաց ։
Առ զամբիւղ, առ զամբիւղ, առ զամբիւղ,
Յօտար աղջկանէն ։

ԶԱրարատ, զՏիգրիս և զԵփրատ Թողի,
Միայնակ շրջիմ աստ յեզերս Գանգէսի ․
Պանդուխտ եմ, օգնեցէ՛ք անտերունջ անձին,
Զի ծընողք ձեր յառաջ՝ աստ պանդուխտ էին։
Առ զամբիւղ, և այլն ։

Զամբիւղք իմ են յարմար ասղնեգործութեան,
Պահել անդ զմատնոց, զԹել, և զասղաման ․
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսին,
Մինչ գառինք և ոչխարք զինև խաղային ։
Առ զամբիւղ, և այլն ։

Գանձ բազում, ցաւք բազում կան յայս աշխարհի,
Պէտք սակաւ, ցաւք սակաւ են յիմում գեղի ․
Զայգի մի ունէի, զամբիւղ գործէի,
Լոկ կաթամբ և պտղովք երջանիկ էի ։
Առ զամբիւղ, և այլն ։

Աստ ծիրան, սերկևիլ, և խաղող չկայ,
Բայց միայն փափիայ, քիլայ և աստայ ․

Ե՞րբ էջէ · զի արժան եղէց վերստին ,
Ճաշակել զպտուղս իմոյ պարտիզին ։
Առ զամբիւղ և այլն ։

Ապա դուք լո՛ւ տիկնայք զամբիւղս իմ առէք ,
Գիւղական աղջկան սիրով օգնեցէք ·
Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք
Զերախտիս ձեր առ իս գովեցից բազմօք ։
Առ զամբիւղ , և այլն ։

ՄԵՍՐՈՎԲԵԱՆ ԱՇՆԱՆ ԱՌԱՒՕՏ ։

Ա՛հ աշնան առաւօտ սրտի իմոյ զարդ ,
Դու բարեաւ ծագեցար ինձ բերկրութիւն արդ ·
Արեւուն կարապետ քոյ պայծառ դիմաց ,
Տամ սիրտ իմ սիրովին պատարագ կամաց ։
Առ իբրու , ա՛ռ իբրու , առ իբրու նուէր կնքերկաց ·

Թորթորեալ հովլու զով ցօղով գիշերեան ,
Շողշողաս գոյն ըզգոյն որպէս ծիածան ·
Դու հոգի սոխակին , դու շունչ ես վարդին ,
Դու և քո քերթողին քո սիրահարին ։
Ես իբրու , ես իբրու , ես իբրու Ադենի երկնային ։

Դ,որ աւուր տուընջեան դժխոյ քրքմազգեաց ,
Գաս բազմեալ տիկնօրէն ՚ի վարդագոյն կառս .
Անիւք քո աստեղունք , երիվարք հողմունք ,
Փողար քո մուզայք են , և ծառայք ցոլմունք.
Ես խբրու , ես խբրու , ես խբրու քո գեղոյ ստրուկ ։

## ՇՐԶԻՐ ԱՆՀԱՆԳԻՍՏ ։

՚Ի մէջ ճանապարհի տես քո սիրածի հալն ,
Որպէ՛ս շրջէր անհանգիստ վասն քո քաղցր
տեսուն ։ ( Կրկնեա՛ )

Նայէր քո սիրելւոյն սիրոյդ է միշտ արթուն ,
Ողբալով խնդրումէր վասն քո քաղցր տեսուն ։
( Կրկնեա՛ )

Աղորդ որ ջահէլաս , դու ինձ կարօտ պահումս ,
Մինն դու մտածում չես , թէ աշխարհս ճում
կըմնայ ։ ( Կրկնեա՛ )
Աւաղ օրըս էհաս խեղճ և ողբալի մնացի ,
Վասն քո քաղցր տեսուն այժմս կարօտ մնացի ։
( Կրկնեա՛ )

Մարդոյս կեանքն է վայրի , ՚ի մէջ ունայն աշխարհի ,
Միայն թէ կըմնայ քո սէրըն ինձ յիշելի ։
( Կրկնեա՛ )

## ՆԱՇԽՈՒՆ ԲԼԲՈՒԼ։

Սիրով հարցուր նաշխուն բլբուլ,
Կարօտամ ես կնկուղ վարդիդ։

Տարբերութիւնս ինձի բռնէց,
Սիրելուցըս ինձ բաժանէց։

Նման տատրակի ես դարձայ,
Վարդիդ վերէն ես շիլացայ։

Ջահէլտօ դու խաթուն ջանի,
Քո սէրըն ինձ կուսըպանի։

Աշաչանօք 'ի քէն խնդրեմ,
Չըթողուս զիս կարօտ մեռնեմ։

Ջըլան ումրըս յանցայ կալման,
Ես ամ քո հէշխիցըն լալման։

Նուրայ իմ քո տեսած զարդն,
Զորամանայ այգուդ վարդն։

Զարմանալի էր մեր սէրն,
Մշտապէսի քո ընկ'ըրըն։

Րոպէ րոպէ ես կու խնդրեմ,
Որ սիրելուս ուրախ տեսնեմ։

Մոմերով սիրտըս վառուածայ,
Քո խօսքերըն սիրուն թարայ։

---

ՇՐԹՈՒՆՔԴ ԼԱԻ ԳԻՆՈՅ ԹԱՍԱՅ։

ՅԱՏԿԱՊԷՍ քեզի սիրէլամ,
Սիրովդ յոյժ խորովվէլամ։

Ունեմ սէր, քո սրտին հարցն,
Ուրախ դէմքըդ առ ինձ դարձն։

Վասն ո՞ր աս պահում ինձ լալով,
Վարայ անեմ երկու տարով։

Հարաս լուս դէմքըդ գողումաս,
Հայիֆ մէջ սրտիս դաղումաս։

Աննման տեսօք ես փէրի,
Աչքերիդ ելէլամ գերի։

Նազովըդ ինձի խռումաս ,
Նռան ծառ սրտիս տխրումաս ։

Էս Ջաբրըն ինձի հարասայ ,
Շրթունքդ լաւ գինոյ թասայ ։

Սիրակա՛ն , սիրով աննման ,
Սիրոյդ ծով ընկայ խեղդուման ։

Յատկապէս քեզ որ տեսմանամ ,
Ծածուկ սիրով սապակմանամ ։

Նարգիզըդ հոգիս կու հանէ ,
Նոր սիրտըդ ռահըմ կընկանէ ։

Է՛ զալըմ սէր ունես ասա՛ ,
Շրթունքըդ լաւ գինույ թասայ ։

Ա՛յ անիրաւ չո՛ւմ չես ասում ,
Սիրելույդ կարօտաս պահում ։

Բախարար դէմքդ երբ զարդումաս ,
Սրտիս մէջն դու դաղումաս ։

Իմ քա՛ղցրեկ սէր կամըդ ասա՛ ,
Սիրելըդ վերայ ողորմայ ։

Սիրոյդ յէշխէն ելայ գէրի ,
Ասա՛ սէր քո ինձ սիրելի ։

Մոռաման չեմ ես քո սէրըն ,
Ո՞ւմ ասեմ ես իմ դարդէրըն ։

Մին մտածում չես դու ինձ համար ,
Որ ուզումամ քեզ անդադար ։

Աղորդ ասա՛ միտըդ ինչա՛յ ,
Իմ կամըն քեզ լա՛ւ յայտնիայ ։

Ես քո սիրէն չեմ կուշտաման ,
Սաստիկ սիրովամ տապակման ։

Տրտում սրտով մանամ զոլման ,
Մղամ թէ դու չե՛ս իմաման ։

Նարնջի դէմքըդ փայլմանայ ,
Սիրտս սիրովըդ հրմանայ ։

Փրկէր ինձ էս ցաւից շուտով,
Որ կմեռնեմ համբերելով ։

Ո՞ աննման սէրդ իմ ասմ ,
Աչքերըդ աստղի նմանայ ։

Ա՞յ զալըմ քեզ որ տեսմանամ ,
Ցաւերըս ողջ մոռամանամ ։

Սէ՛ր իմ, սէ՛ր իմ, ո՛վ աննըման ․
Ինձ կըմընաս դու յաւիտեան ։

---

### ՏԱՂԻ ԲԷ ՏԱՂ ։

ԱՌԱՒՕՏՈՒՑ ելնեմ լալով ,
Քո լոյս երեսին տամ բարով ․
Ուրախ յերեսըդ նայելով ,
Տաղէ բէ տաղէ նօվ ընօվ ։

Լոյս երեսըդ երբ գաղումաս ,
Ջգարիս մէջըն դաղումաս ․
Սուր դանակով սպանումաս ,
Տաղէ բէ տաղէ նօվ ընօվ ։

Դու վարդի ծառ, ես բլբուլամ,
Սիրույդ էշխէն ես ուրախամ.
Վարդերդ բաց շատ սիրէլամ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Տուած ընծայդ պատուականայ,
Քան զմարդըն զօլականայ.
Լուսնեակի նման փայլմանայ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Գօվեմ սիրելույս ման գալը,
Շիլացոյց ինձ այդ նոր խալը.
Մ՝աէր սիրտըս, սէս իմ հալը,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Ա՛խ քաշելով մանամ զօլման
Սիրելէ՛, քեզի գտանեմ.
Սրտիս փափագն լցուցանեմ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Յաւուր միում ես քեզ տեսայ,
Մէջ ջլխուծին բազմեալ տեսայ.
Սիրով սրտով հաւանեցայ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Քանի ես քեզ կըճանանչեմ,
Թըմոշկէլաս էլ բացման չես·
Զարմանքայ որ չիլաման չես,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Գուձէլէր վարդագոյն շալըդ,
Շողշողալով առ իս գալըդ·
Շիլացոյց ինձ այդ նոր խալըդ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Շատ սիրահար խեղճ բլբուլամ,
Անուշահոտոյդ գերիամ·
Որպէս ծարաւի ջրի ամ·
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Ես քո սիրէն կուշտաման չեմ,
Սէ՛ր քեզանէ բաժանման չեմ·
Առանց քեզի դադարման չեմ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Իմ սէրըն քեզ շատ հաստատայ,
Նման արեւին փայլմանայ·
Գաղէ՛ր սրտիդ որ լոյս չտայ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Սիրտըդ էշխէն ես երվելամ ,
Եար քո սիրէն մոլորվելամ ·
Կեանքս կեանքիդ յետ կապելամ ,
Տաղէ բէ տաղէ նօվ բլնօվ ։

Աչքէր ունես խումար խումար ,
Յունքերըդ կապէլաս կամար ·
Ես քո սիրէն եմ խելագար ,
Տաղէ բէ տաղէ նօվ բլնօվ ։

Կեռքնիդ անգին մարգարիտ ,
Թամամէլաս տասչօրս տարիդ ·
Մտնեմ բաղչէդ քաղեմ բարիդ ,
Տաղէ բէ տաղէ նօվ բլնօվ ։

Մատնէր ունես մոմէ թախած ,
Քեզի նման էլ չեմ տեսած ·
Լոյս քո սիրէն եմ ես հալած ,
Տաղէ բէ տաղէ նօվ բլնօվ ։

Ա՛խ քաշելով էս օրն հասայ ,
Մինչև քո սէրն յաւել տեսայ ·
Մեռեալ էի կենդանացայ ,
Տաղէ բէ տաղէ նօվ բլնօվ ։

Րոպէ րոպէ ես տոժմանամ,
Ուրախութենէ զոզմանամ.
Իշխովըդ ես մոլորմանամ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ:

Ես կըջօկվեմ քեզնէ լալով,
Վօչայ դըրի երկու տարով.
Կըթողում քեզ լալով լալով,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ:

Ագորդ որ ես գլորածամ,
Համ կենդանի՝ համ մեռածամ.
Տեսոյդ վերայ շիլացածամ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ:

Հագիդ շորէրն կարմիր ալայ,
Քո պատկերըն թամամ խալայ.
Կարմիր թշէրըդ ինձ արա,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ:

Բարունապետն տիեզերաց,
Արժան արացէ քեզ եւր փառաց.
Ինձ ես քեզ հետ միաւորած,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ:

## ՅԵՌԵԱԼ ԱԿԱՄԲ ։

ՅԵՌԵԱԼ ակամբ պատուականօք
կորուսեալ եմ Սիրելիս ·
Նորաբողբոջ վարդագունեկ
հոտոտելի նազելիս ·
Նորա սիրոյն ելեալ յերկրէս
ղարիբ շրջիմ յայմ երկրիս ·
Որպէս բլբուլ շրջիմ սարէ
'ի սար՝ վասն սիրելւոյս ,
Ոչ գտանեմ , ոչ գտանեմ ,
գերի մնամ 'ի ձեռն սիրոյ կարօտոյս ։

Արուսեակն իմ , երևակն իմ ,
արեգակն իմ , լուսինն իմ ·
Խնդութիւն իմ , բերկրութիւն իմ ,
հաճութիւն իմ , սէրն իմ ·
Նազելին իմ , պատուելին իմ ,
Թագուհին իմ , Թագն իմ ·
Որպէս բլբուլ , և այլն ։

Բազում անգամ փափագեցայ
տեսիլդ քո տեսանել ·
Բայց ոչ գիտեմ թէ յոր տեղ ես ,
որպէս կարեմ հասանել ·

Դ.

Իմ կարօտոյս ոչինչ օգնէ,
ո՞րպէս կարեմ դադարել.
Որպէս բլբուլ. և այն։

Թախծական ինչ, ցնծութեան ինչ
ո՛չ գոյ բնաւ ին 'ի յիս.
Սէրդ եղեալ անդամանդեայ,
որպէս երկաթ քարշէ զիս.
Քո սիրոյ կարօտութիւնն
որպէս հուր եղեալ այրէ զիս.
Որպէս բլբուլ. և այն։

Անդադա՛ր անդադար քեզ ձայնեմ
և լամ եմ սիրելի.
Եղկելի եղեալ շրջիմ կարօտով,
սիրոյդ գերի ելի.
Ձայնես առիս ծուր և էյես,
զամ տեսանեմ քեզ նազելի.
Որպէս բլբուլ. և այն.

Հանապազ ողբամ և կոծամ,
որ հեռացար դու յինէն.
Արժանապէս ողամ և կոծամ,
որ զրկվեցայ ես 'ի քէն.

Ոչ համբերեմ այս խռանդիս
    սէրս վառեալ է 'ի քէն .
        Որպէս բլբուլ· և այն ,

Այդ աննման քաղցրագունեղ
    պատկերդ՝ որ դու ունիս .
Գիշեր ցերեկ մտածելով՝
    միշտ մտածեմ ես 'ի յիս .
Եւ ոչ գիտեմ զինչ ճար առնեմ ,
    զի բոյժ լեցի իմ սրտիս .
        Որպէս բլբուլ· և այն ։

Մէկ ակն՛ես յոյժ՛ գովելի ,
    սէրդ սիրոյդ սրտակից .
Որոնելով ոչ գտանեմ ,
    եղեալ եմ յոյժ ցաւալից .
Կարօտոյս սէր սրտումս վառէ ,
    ոչ գիտեմ զի՛նչ արարից .
        Որպէս բլբուլ· և այն ։

Ե՞ր աննման զեր գեղեցիկ ,
    Նազելոյս կորուսեալ եմ .
Նորա սիրոյն սիրով փափաքեմ ,
    սիրահարեալ եմ ։

Որպէս երգնակ կարօտալի ,
իմ աննման վարդս խնդրեմ.
Որպէս բլբուլ. և այլն ։

---

## ԲԱԺԱՆՈՒՄՆ ՍԻՐԱՀԱՐԱՑ ։

ՈՂՋՈՅՆ դառնութեան
հոգւոյս եկի մատուցանել ,
Եւ առնուլ զհրաման ՚ի քէն
առ ՚ի ծով մտանել ։

Աւաղաբեր խնդիրըդ քո
սիրտըս խոցոտէ ,
Հոգիս իմ ելեալ տեղէն
արեան վտակ հոսէ ։

Ես ո՛չ գիտեմ զի՞նչ ժամ էր այն
յոր մեք իրար տեսաք ,
Զի այժմս սաստկագին սիրով
այսպէս շաղկապեցաք ։

Ես ոչ երբէք մտածեցի
որ յինէն կհեռանաս ,
Եւ անբժշկելի վէրքն
իմ սրտիս կըբառնաս ։

Աւա՜ղ աւա՜ղ ինձ եղկելւոյս
որ այսօր կըհեծեծանամ ,
'ի թևէն ցանկալւոյն իմոյ
ահա՛ 'ի բաց գընամ ։

Ո՞վ անողորմ սիրահար ,
զիա՞րդ այդքան ողբաս ․
Աղէկատոր հեկեկանօք
ծըքան ողո՜րմ լաս ։

Ես ո՛չ հոգամ զկեանս իմ,
և ոչ կորուստ անձին ․
Այլ երկնչիմ խորտակիցես
խորհուրդն իմ սրտին ։

Լեր դու յինէն յոյժ մխիթար
և անկասկածանօք ,
Ուշոք կարէ զիս պատրել
այլ իմն օրինակօք ։

Որովհետև ծնար դու
վասն իմ, սիրելի Տիկին ,
Տուր ինձ նշան հաստատութեան
սիրոյ քո մատանին ։

Ո՛ւ լինէն զմատանին
 և զէր ՚ի քո մատին ,
Յորժամ տեսցես զայս մատանին ,
 յայնժամ յիշեսցես ինձ ։

Ահա երթամ ես իմ սիրելի
 և ցանկալի Տիկին ,
Զի նաւն նշանաւ իւրով
 կոչէ զիս յիւր փորին ։

Նայեմ երկինք՝ և այս ահեղ
 և սարսափելի ծով,
Խնդրեմ ՚ի Տեառնէ քեզ տարեալ
 բերցէ ապահով ։

Ահա եղէ ես նման Տատրակի
 զոյգն կորուսեալ,
Եւ ելեալ ՚ի քէն գնամ
 որպէս մոլորեալ ։

Փրկիչ համայն աշխարհի ,
 ըզնա քեզ աւանդեմ ,
՚ի ներքոյ թևոց քոց տանել
 զքեզ յարաժամ մաղթեմ ։

## ԵՐԳ ԲՈՒԼԲՈՒԼԻՆ ։

ՅԱՐՈՒՑԵԱԼ Բիւլբիւլին ՚ի մէջ գիշերոյն ,
Ասէր , ո՜վ եգիտ՝ եգիտ զսէրն իմ քաղցրագոյն։

Որոնէր անհանգիստ ՚ի մէջ իւր այգւոյն ,
Ըշտապով ճեմէր՝ ճեմէր ՚ի սէր ցանկալւոյն ։

Վայելուչ ձայնիւ երգէր յոյժ համեղագոյն,
Մի՞ թէ դուք տեսիք՝ տեսիք զսէրն իմ
քաղցրագոյն ։

Հետ շաւղին ընթացեալ փութով վաղագոյն,
Յուզելով պարէր՝ պարէր ՚ի սէր ցանկալւոյն ։

Առիս նայեցէք՝ ասէր , պահապանք այգւոյն ,
Եկեալ ծիլ եհաս՝ եհաս զվարդն իմ
քաղցրագոյն ։

Նազելի վարդէն սիրոյն լայր խիստ դառնագոյն,
Ողբալով գոչէր՝ գոչէր ՚ի սէր ցանկալւոյն ։

Է՛ իմ ողորմած Աստուած՝ Տէր կարողագոյն ,
Վերստին տուր ինձ , տուր ինձ վարդն իմ
քաղցրագոյն ։

Սոյնգունակ մաղթեմ և ես Տէրն բարձրագոյն ,
Դարձուսցէ զգերիս՝ գերիս 'ի մեղաց գործոյն ։

ՔԱՂ.ՑՐԱԳՈՅՆ ՎԱՐԴ ։

Սիրտ իմ անդադար եղև սիրահար ,
Առնէ զիս աւար , շրջիմ խելագար ։
Վա՜րդ , վա՛րդ , վա՛րդ ։

Իմ սիրական վա՛րդ , որ ինձ զուարթ ,
Սիրոյդ եմ աղքատ , ո՛վ երկնագոյն վարդ ։
Վա՛րդ , վա՛րդ , վա՛րդ ։

Րամ խոցեալ ցաւով , աղաչեմ սիրով ,
Լեր ինձ ապահով , իմ զուարճական վա՛րդ ։
Վա՛րդ , վա՛րդ , վա՛րդ ։

Երեսըդ պայծառ , ծով աչքերդ վառ ,
Յունքերըդ կամար , մոլորէ ինձ վա՛րդ ։
Վա՛րդ , վա՛րդ , վա՛րդ ։

Լալով աղաչեմ, սիրով պաղատեմ,
Ցաւերս ասեմ, մին ճար արա՛ վա՛րդ ։
Վա՛րդ, վա՛րդ, վա՛րդ ։

Զի վասն քո եմ, յուսով քեզ դիմեմ,
Վա՛րդ քեզ մեռանիմ, շուտ հասի՛ր ինձ վա՛րդ ։
Վա՛րդ, վա՛րդ, վա՛րդ ։

## ԾԱԳԵՑԱՐ ։

ԾԱԳԵՑԱՐ գերթ արուսեակ,
սէր իմ դու գեղեցկաձայն պսակ,
Դէմ քո յաղթօղ հրոսակ,
քաջ պարթեւահասակ,
Ո՛հ կարմրատեսակ սէր իմ,
Ի սրտիս հեղուսակ ։

Դիւցազնական քոյդ դրակ ․
սէր իմ, ոսկէթել վարսիդ պրակ ։
Սիրտ իմ բարձեր արագ,
Ետուր սիրոյդ ճարակ,
Ո՛հ տոչորիմ արագ,
յառեալ ի գեղ քո միակ ։

Սէր քո ուժգին քան զմագնիս ,
սէր իմ վառի մինչ յինէն մեկնիս ,
Կրեմ զտենչ քո յիս ,
ծրարեալ ՚ի հոգիս,
Ո՜հ ցնծայ իմ հոգիս ,
մինչ տեսանեմ զքեզ առիս ։

Զխորհրդով քո մինչ յածիմ,
սէր իմ, սերտ սիրով քով զգածիմ,
Թանձր հոգով մտածիմ,
սրով սիրոյդ խոցոտիմ,
Ո՜հ ՚ի վրանս ածիմ,
խնամօք սիրոյդ լոկ տածիմ ։

Ցաւօք սիրոյ քոյ յածիմ,
սէր իմ, կայծոգին ըղձիւ կոծիմ,
Արե՛ շիջի՛ գլոց իմ,
գբորբոքեալ հնոց իմ,
Ո՜հ մոխիր ՚ի ծոց իմ,
և զովացո գլոց իմ ։

Դիղ գերագանց զեր ամխոյժ ,
սէր իմ ցանկալի , հոգւոյս իմ յոյժ ,

Բարձաւ յինէն յոյս ,
վասն այն առնեմ զգոյժ ,
Ո՛հ 'ի քէն է ինձ բոյժ ,
տառապեալ սրտի իմ ոյժ ։

Զակատեալս Եփրեմ պիտակ ,
սէր իմ, սիրոյդ չէի գիտակ ․
Զի է 'ի խորայատակ ,
կամքդ ախորժ դիպակ ,
Ո՛հ յարմարատեսակ
զովիչ յորդ վտակ ։

ԱՆՈՒՇԱՀՈՏ ՎԱՐԴԻ ՏԵՐԵՒ ։

Դու որ եկեր երեւեցար ,
Իբրեւ արեւ ինձ ծագեցար ․
Ցնծութիւն ինձ պարգեւեցար ,
Մի՛ մոռանար իմ սիրելի ։

Իմ աննման , իմ լոյս արեւ ,
Անուշահոտ վարդի տերեւ ․
Լալով ասեմ քեզ , եւ ա՛ռ բարեւ ,
Մի՛ մոռանար իմ սիրելի ։

Իմ աշնիւ երամ երամ ,
Իմ գեղեցի՛կ վա՛րդ անթառամ .
՚Ի քո երկրէն ես կու գընամ ,
Մ՛ի մոռանար իմ սիրելի ։

Արէ՛ իմ քաղցրիկ աղաւնի ,
Ոսկէխնձոր զարմանալի .
Քո տեսնողին բերէր երանի՛ ,
Բարի եկիր , իմ սիրելի՛ ։

ՎՐԱՍՏԱՆԱՑ ԳՕԶԱԼՆԵՐՆ ։

ԳՈՎԵՄ սրտիւ ուրախական ,
Թիֆլիզ քաղաքըն պատուական .
Յոյժ գեղեցիկ և սիրական ,
Վրաստանայ գօզալներն .
Ա՛յ Վրաստանայ գօզալներն ,
Շէն Թիֆլիզու խաթուններն ։

՚Նանքան ունեն ղուղրաթի համամ ,
Մինչի խաթուններն թամամ .
Սպիտակ բօխախ բոլոր շամամ ,
Վրաստանայ գօզալներն . Եւ այլն ։

Աչքէր ունէն շամս ու ղամար ,
Յունքերըն կապել են կամար ·
Կապելէն Մուրասայ կամար ,
Վրաստանայ գօզալնէրն · Եւ այլն ։

Ծամերն դաստայ ոլորած ,
Ցերեսին լուսին բոլորած ·
Շատ մարդ է տեսած մոլորած ,
Վրաստանայ գօզալնէրն · Եւ այլն ։

Սիրէլան եարին պատուական ,
Ունեն ժառանգ արուական ·
Արժանիան Թագաւորական ,
Վրաստանայ գօզալնէրն · Եւ այլն ։

Մէջլիս նստեն համով դամով ,
Գինի խմեն ոսկէ ջամով ·
Որ քան զշաքարըն համով ,
Վրաստանայ գօզալնէրն · Եւ այլն ։

Զարրաֆ են հագէլ բարաբար ,
Սամուր փալամփու շարըլար ·
Ողջն էլ սիրուն մի հաւասար ,
Վրաստանայ գօզալնէրն · Եւ այլն ։

Հագէլին գումաշ ու խաւայ ,
Ունեն շատ ղարավաշ և ծառայ .
Խագելեն լաւ կանաչ խառայ ,
Վրաստանայ գօզալնէրն . Եւ այլն .

Ես Նաղաշն եմ մեղաց ծովին ,
Նորանց սիրովըն գինով եմ ,
Խըբար չեմ թէ ինչպէս գովեմ ,
Վրաստանայ գօզալնէրն . Եւ այլն .

## ՍԻՐՈՅԴ ԿԱՐՕՏԻՄ

Ո՛վ սէր իմ , սիրոյդ կարօտիմ , ( Կրկնէ՛ )
Թարց տեսոյդ ես ոչինչ լինիմ .
Արե էջ ընդ իս՝ յայգին իմ ,
Ուրախ լեր թէ ոչ թառամիմ .

Արտաւտըն ցանկայ իւր վարդին , ( Կրկնէ՛ )
Եւ հարսն լանջագեղ զարդին .
Այլ և ես քոյդ ազնիւ անձին ,
Ձի դու ես իմ սիրոյ բաժին .

Ո՞վ Քրիստոս լեր դու օգնական , ( Կրկնէ՛ )
Սիրելի ( այս անուն ) սիրոյ պատուական .

Տացէ Տէր զկեանս խաղաղական ,
Լինի Աստուած յաւիտենական ։

Արդարև այր եր՛ևելի ,          ( Կրկնեա՛ )
Եւ յաւէտ բազմաց ցանկալի ·
Այլ և ես մերժեալս խղճալի ,
Քոյդ սիրոյն եմ կարօտալի ։

ԱՇԱԿԵՐՏԱՑ ՀՐԱՄԱՆ ՏԱՑՈՒՔ ։

Աշակերտաց հրաման տացուք ,
Եւ պար առեալ զայս երգեսցուք ·
Թասերն ամէն գինեաւ լցցուք ,
Եւ մատռուակսն գոչեսցուք ·
Ռէի ռէռէ , ռէի ռէռէ , ռէի ռէռէ , ռէ
ռէ ռէ ռէ ։

Բազմեալ եղբարք 'ի միասին ,
Առնուլ բաժակ գինւոյ թասին ·
Եւ յամոքել Մարմնոյ մասին ·
Կեան ըստ տառին ժամ է արքէն ·
Ռէի ռէռէ , և այլն ։

Սէրն ամէն վայելեսցուք ,
Եւ մատռուակըն գոչեսցուք .
Բազմեալ եղբարցն պարգևեսցուք ,
Համայն սրտիւ կեանս մաղթեսցուք :
Ուէի ռէռէ . և այլն :

---

### ՆԱՇԽՈՒՆ ԿԱՔԱՒ :

Փութա՛ առ մեզ Նաշխուն կաքաւ ,
Սարերն ամէն կանաչացաւ .
Զարդ զգեցեալ պայծառացաւ ,
Յայդ լեռներէն 'ի վայր փութա՛ :

Յաւուրս գարնան պարեալ ցնծաս ,
Նաշխուն ձագերով շուրջ կուգաս .
Արագ արագ ստոստելով ,
Ծաղկանց վերայ թաւալելո՜վ :

Վա՛ն է՞ր թռչիս , ընդէ՞ր փախչիս ,
Կամ զի՞ թագչիս կողկողալով .
Զայն արձակես քոյժ փարելը ,
Միշտ հառաչես և կարկաչես :

Ոսկեխայլ փետուրք քոյին ,
Ջանազան գունով շողշողին ․
Որպէս լուսին բոլորովին ,
Ցայգ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Փառօք ճեմիս որպէս իշխան ,
Լերինք մնան քեզ յարկ սեփական ․
Դաշտերն ամէն համանգամայն ,
Ցայգ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Ծիծաղաձայն քաղցրիկ թռչուն ,
Զքնաղատիպ և յոյժ սիրուն ․
'Ի մէջ ծաղկանց ննջես 'ի քուն ,
Ցայգ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Այդ լեռներու հուպ առընթեր ,
Դէպ զառ 'ի վայր և զառ 'ի վեր ․
Թևաբաց թռօք ճեմս առեր ,
Ցայգ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Կարկաշական այդ ձայն քո նուրբ ,
Տոչորէ զիս սիրոյ քո հուրբ ․
Եւ զովանալ արտասուաց ջուր րբ ,
Ցայգ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Քև ճոխանան համայն լերինք ,
Եւ համօրէն մարգագետինք ·
Ըզ քեզ գովլին ազգ և ազինք ,
Յայդ լեռներէն ՚ի վայր փութա՛ ։

Արդ բարձրացո՛ ձայն քո ընդ իս ,
Եւ փարատեա՛ զսուգ սրտիս .
Հայցմամբ քոյոյ երգարանիս ,
Յայդ լեռներէն ՚ի վայր փութա՛ ։

---

## ՍԷՐ ԻՄ ԱՐԻ՛ ։

Արի՛ ելցո՛ւք ՚ի միասին ,
Ուրախութեամբ մտցուք յայգին ·
Ըզմայլեցուք տեսլեամբ վարդին ,
Ո՜հ · արի՛ արի՛ , սէր իմ արի՛ ·
Ցնծամք ՚ի մէջ կարմիր վարդին ։

Հանդերձեալ կանգնէ բիւլբիւլն ,
Յարշալուսն յառաւօտին ,
Ուշոս յօրինէ վասըն վարդին ,
Ո՜հ · արի՛ արի՛ , սէր իմ արի՛ · և այլն ։

Կայսրապէս պսակ 'ի գլուխ
փառօք ճոխացան ,
Շաղանիւս մարգարտաշար
Թագիւ պճնեցան .
Ո՜վ Տէր իմ , և այն ։

## ԲԼԲՈՒԼՆ ԵԿՆԱԼ ։

'Ի ԳԱԼ գարնան եղանակին ,
Բլբուլն եկեալ շրջէր յայգին .
Թևասքօղէր բոլոր վարդին ,
Գոչելով աղաղակէր , վա՛րդ վա՛րդ վա՛րդ ,
Ես բլբուլ դու վարդ ։

Սիրով այգին կմըտանէր ,
Վարդըն պայծառ կտեսանէր .
Նորա սիրոյն կմեռանէր ,
Գոչելով աղաղակէր , վա՛րդ վա՛րդ վա՛րդ ,
Ես բլբուլ դու վարդ ։

Փախագելով վարդի տեսոյն ,
Հսկէր մինչև հաւախօսուն ,
Թարթէր ակամբ բացուել լուսոյն .
Գոչելով աղաղակէր , վա՛րդ վա՛րդ վա՛րդ ,
Ես բլբուլ դու վա՛րդ ։

Բիւր երանի՛ վարդին ասէր ,
Ծաղիկ պայծառ՝ քաղցր ձայնէր .
Տխուր դիմօք աչացն հայէր ,
Գոչելով աղաղակէր , վա՛րդ վա՛րդ վա՛րդ ,
Ես բլբուլ դու վարդ ,

---

## ՔՈՅ ՁԵՌՆ ՉԻ ԸՆԿԱՄԱՆ :

Գամ և պատմեմ իմ անցքն ,
Թէ ծրպէսայ իմ ջանքն .
Ա՛յ ջիվան պատմեա՛ ինձ ,
դու ես նըման վարդի .
Ով սիրելի , իմ նազելի ,
դու ես նըման վարդի .
Սիրելի մի՛ տրտմիլ ,
մի խորհիլ վատ կամքի .
Չէ՛լ չէ՛լ չէ՛լ , ա՛յ չէ՛լ չէ՛լ չէ՛լ ,
քո ձեռն չի ընկաման :

Ես ոչ ունեմ շատ կամքն ,
Թէ ո՛չ միայն սէր և փառքն .
Ամաչմանամ քեզ ասիլ ,
իմ կա՛մքն քեզ պատմիլ .

Ասա՛ դու իմ սիրելի՛ ,
մի՛ ամաչել պատուելի՛ ·
Կամքիդ պէս կամիմ երթալ,
քո ձեռքին հնազանդ կալ·
Չե՛ւ չե՛ւ չե՛ւ, ա՛յ չե՛ւ չե՛ւ չե՛ւ,
քո ձեռն չի ընկաման ։

Ուրախ սրտիւ ուրախանամք ,
ես և դու ամուսնանամք ·
Ես կընդունեմ քո կամքին ,
բայց սպասեմ ծնողիս հրամանին ·
Ես կերթամ կըխնդրեմ ,
մեր սէրըն կըկատարեմ·
Տէ՛ գնա՛ , շո՛ւտ արա՛ ,
եկ ինձ էլ ուրախ արա՛ ·
Չե՛ւ չե՛ւ չե՛ւ, ա՛յ չե՛ւ չե՛ւ չե՛ւ,
քո ձեռն չի ընկաման ։

Ծառայեմ քեզ սիրելի՛ ,
ծնողիս հրաման բերի ·
Բարի ճանապարհ պատուելի՛ ,
խօսքդ լինի հաճելի ·
Բարով քեզ , իմ ցանկալի՛ ,
բերի հրաման ցնծալի ·

Ցնծացայ ես քո խօսքին ,
  քո բերած ուրախ լուրին .
Շէ՜ւ շէ՜ւ շէ՜ւ, ա՜յ շէ՜ւ շէ՜ւ շէ՜ւ,
  քո ձեռն չե ընկաման .

Սպասեմ սէր մին պաչին ,
  իմ բերած ուրախ լուրին .
Չիմ խնայում քո խօսքին ,
  տո՛ւ ինձ քոյ մին պաչին .
Քո պաչն ինձ ամդաւ շինէց ,
  քո սէրըն սիրտս վառէց .
Թէ մեր սէրն հաստատայ ,
  ուրախ կեանք մեզ համարայ .
Շէ՜ւ շէ՜ւ շէ՜ւ, ա՜յ շէ՜ւ շէ՜ւ շէ՜ւ,
  քո ձեռն չե ընկաման ,

Եկ գնանք եկեղեցին ,
  հնազանդեմք մեր օրէնքին .
Տէրաս դու դարձէլ ինձ ,
  դճր խրարաս՝ արա՛ ինձ .
Շնորհաւոր լինի մեզ ,
  Աստուած պահի հաստատ քեզ .
Այս խաղըս ձայնով ասէք ,
  վերջինըն իմացէք .

Չէ՛ւ չէ՛ւ չէ՛ւ, ա՛յ չէ՛ւ չէ՛ւ չէ՛ւ,
քո ձեռն չի ընկաման ։

## ՄԱՆՈՒԿ ՔԱՂՑՐԱԳՈՅՆ ։

Ողջոյն երկնային լցեալ աւետեօք ,
Առ ձեզ տեսանի այսօր պարառեալ ·
Եւ բնութիւն երկրիս իւր օժանդակօք ,
Ելից ցանկութիւն սրտի ձեր պաշտեալ ։

Պարգեւելով ձեզ մանուկ քաղցրագոյն ,
Որ է կապ սիրոյ և ամուսնութեան ·
Որով յուսադրեն ձեզ վայելելոյ ,
Խաղաղ և անհոգ հասակ ծերութեան ։

Տեսանեմ ծիծաղ 'ի դէմս համայնից ,
Որք խմբեալք են աստ , յոյժ յօժարակամ ·
Ուրախութեան ձեր լինել խնդակից ,
Տարփանօք ջանամ՝ որպէս բարեկամ ։

Փարին յնծութեամբ 'ի վկայութեան ,
Հաստատ և անկեղծ բարեկամութեան ·
Խնդրելով Տեառնէ 'ի խորոց սրտի ,
Ունել ձեզ ընդ իւր Նախախնամութեան ։

Նաեւ ընդունել զերկնային ձեր ,
Արժան առնելով լինել 'ի հանդէս ·
Ընդ սիրելեաց իւր սիրով կարասցէ ,
Տանել յարգութեամբ զանուն Յովհաննէս ։

---

## ԲԱՑՈՒԻՐ ԲԱՑՈՒԻՐ ։

'Ի ԳՆԱԼ գարնան ես քեզ կարօտ մնացի ,
Որոն ելեալ 'ի գլուխ լերանց գնացի ·
Զքեզ ոչ տեսեալ ես սուգ առեալ յոյժ լացի,
Հեծեծանօք յոգւոց հանեալ ասացի ·
Բացուիր բացուիր իմ կարմիր վարդ աննման ,
Գեղդ նման արեգական վառվառման ։

Ղամբար լուսոյդ՝ 'ի Պաղեստին երեւեալ ,
'Ի Գողգոթա 'ի սուրբ լերին փայլեցեալ ·
Զոր իմ տեսեալ զմահուն տանջան մոռացեալ,
Որով զԵւա մայր կենդանեաց կոչեցեալ ·
Բացուիր բացուիր և այլն ։

Անճառ խորհուրդ 'ի քեզ շնորհեալ Աներեն ,
Կանաչ , կապոյտ , կարմիր նման աղեղէն ·

՝Նշան սիրոյ աշխարհակուլ հեղեղին ,
Խաչաձեղուն տապան Նոյեան հօր մեծին .
Բացուե՛ր բացուե՛ր և այն ։

Զարմանալի գլորհուրդ ետես Աբրահամ ,
Զիւր միածին յորժամ տարաւ 'ի զենման .
'Ի բորբոքել ողջակիզին ճենճերման ,
Տունկ գեղաղէշ զեր քան զծառն Սաբեկայն .
Բացուե՛ր բացուե՛ր , և այն ։

Անուշահոտ վարդ գեղեցիկ ծառ ծաղկանց ,
Կարմիր սպիտակ նման ծառոց կուսանաց .
Թագ փեսայից զարդ նորասքանչ Թագուհեաց,
Խնձոր բարձից, գեղ վարսից սուրբ հարսանց .
Բացուե՛ր բացուե՛ր , և այն ։

Բամեալ խաշանց խօսուն զառանց Յակոբեանց ,
Խայտացուցիչ ճամուկ գունով զանազան .
Փայտ սիրուն քերծուն արկեալ յաւազան ,
Որդէարաշխ մանրագորի Ռաքելեան .
Բացուե՛ր բացուե՛ր , և այն ,

Վարդըդ վառեալ նման զիմաց Մովսէսի ,
Բագցրէք բիւլբիւլն 'ի քեզ բնակեալ միշտ
խօսի .

Ո՛վ շափիղայ տեղի ոտիցն Յիսուսի ,
Տենչայ սիրոյդ միաւորել իմ հոգի ·
Բացուէր բացուէր և այլն ։

Արքայն Դաւիթ ըստ Սոմնացի սուրբ կուսին ,
Զքեզ փունջ զործեալ 'ի մի մահիճ հոտհոտին ,
Քոյդ զօրութեամբ ջեռեալ պահիւր ծերունին ,
Թերթիկ անձառ անհասական քան զերկին ·
Բացուէր բացուէր · և այլն ։

Բարուն Ղազար 'ի սէրդ վառեալ զայս երգեաց ,
Տկար բանիւ զքեզ դրուատեալ ներբողեաց ·
Ո՛վ փայտ մաքուր միջնորդ բնաւեց մեր շնորհա·
Արժանացո՛ զնա քո մաքուր պսակաց ,
Բա,ուէր բացուէր և այլն ։

Դրախտին լուսոյ փակեալ դրան բանալի ,
Քառասկերպեան աթոռ վերնոյս սիրալի ,
Տունկ տարրական զեր[illegible]քան զերկին զովելի ,
Նաւակ հրաշից գծեալ արեամբ կարմրալի ,
Բացուէր բացուէր , և այլն ։

Արքայն երկնից ո՛չինչ իմիք հաւատեալ ,
Այլ միշտ 'ի քեզ անքակ սիրով բնակեալ ·

Ցանկարծակի փայլատակեաց ,
Եւ որոտմամբըն անձրեւեաց ·
Առ տուն դառնալ աճապարեաց ,
Մինչ ոչ լըսէր ձայնըն ճէկ ճէկ ։

---

### ՄՆԱ՛ՑՔ ԲԱՐԵԱՒ ԵՍ ԳՆԱՑԻ ։

Արդ հրամանաւ Աստուածային ,
Եկեալ բազումք ընդ փեսային ·
Կալեալ ձեռաց զիս կուսանին ,
Մնա՛յք բարեաւ ես գնացի ·
Մնա՛յք բարեաւ ես գնացի ,
Շատ խնդացի և շատ լացի ։

Օրհնեա՛ զդուստր քո ազնիւ Հայր իմ,
Մի՛ վշտանար թէ բաժանիմ ·
Հայրական գութդ 'ի մտի ունիմ,
Կ'ա՛ս դու բարեաւ , ես գնացի ։
Կ'ա՛ց դու բարեաւ , և այն ։

Օրհնեա՛ զուստր քո իմ անկէն մայր ,
Որ շատ երկամբ դու զիս ծնար ·

Եւ հող տարար ինձ մայրաբար ,
Մնաս բարեաւ և այլն ։

Ահա տամ քեզ քո բանալին ,
Ա՛ռ զայս յինէն տաս քո հարսին ·
Ղատ են փականք իմ փեսային ,
Մնաս բարեաւ և այլն ։

Մա՛յր իմ սիրես լոյս Հաւատըն,
Մի՛ մոռասցիս քոյ զաւակըն ·
Զալալ արա՛ ճերմակ կաթըն ,
Մնաս բարեաւ և այլն ։

Վաստակ կրեցէք զիս պահեցէք ,
Մինչ ցայս հասակս իմ հասուցէք ·
Ահա կամաւ դուք զիս թողէք ,
Մնայք բարեաւ և այլն ։

Եղբարք և քորք իմ սիրական ,
Եւ ընտանիք ինձ պատուական ·
Մի՛ մոռանայք ինձ յաւիտեան ,
Մնայք բարեաւ և այլն ։

Ցորէ յորմէ ծընայ յայս տան ,
Չէի մնալոց աստ յաւիտեան ·

Եղբարք լեցին հաստ սեւն այս տան ,
Մնայք բարեաւ և այլն ։

Արդ օրհնութեամբ Աստուածային,
Ամենեցուն գուստր և որդին ․
Արժան լեցին յայս պսակին ,
Մնայք բարեաւ , և այլն ։

ՄԱՑՐ ՑԱՆԿԱԼԻ

Մացր ցանկալե , հեանալե , յոյժ տենչալե , աննման ,
Ծաղիկ լուսոյ , անտանելւոյ , դու երկնայնոյ օթարան ․
Կոյս գովելե , երանելե , միշտ սխրալե , մարեամ ,
Մայր գովելե , լե լե լե լե , լե լե լե լե , Մարեամ ։

Անապական , մայր եսկական , կոյս եղական տեղուհե ,
Ընհամեմատ , և անարատ , կոյս գերաուատ Թագուհե ․
Կոյս գովելե , և այլն ։

Յաւէտ բարի , փայլուն տեղի , միշտ բերկրալի
խնկուհի ,
Դու գերազանց, համայն ազանց, միշտ բերկ-
րութեանց դշխուհի .
Կոյս գովելի , և այլն ։

Տաճար փայլեալ, խորան կազմեալ, միշտ
փայլեցեալ սրբուհի ,
Անեղ Բանին , խնկականին, մայր Յիսուսին
թագուհի .
Կոյս գովելի , և այլն ։

Զքեզ աղերսեմք, յոյժ վեր երգեմք, աղաղա-
կեմք խնկուհի ,
Փրկել հայցեմք, 'ի քէն մաղթեմք, քեզ հա-
ռաչեմք մայր բարի .
Կո՛յս գովելի , և այլն ։

---

ՀԱՅԿ ԵՐԳ ։

Օ՛ն եկայք արի՛ Հայեր ,
Յիշեցո՛ւք ըղձախնիս մեր .
Միաբան ելցո՛ւք 'ի վեր ,
Յիշելով զարին Հա

Հայր մեր Հայկ էր դիւցազուն ,
Եղիցուք նմին հանգոյն ·
Ազգ փոքրիկ , այլ քաջազուն ,
Է մեր քաջ Ազգըս Հայք ·

Հայկ երեք հարիւր ոգւով,
Միասիրտ որդւով թոռնով,
Ջոկեց մեզ Հայ անունով,
Պարծանք մեր դու Հայկ ·

Գերեզմանք կոչի դաշտն այն ,
Ուր Բէլըն ամպարտաւան ,
Եւ զօրք իւր անկան կործան ·
'Ի բազկաց քոց ով Հայկ ·

Արդ պնդեալ ըզսիրտս մեր ,
Հայաստան , որ է յաւեր ,
Կանգնեսցուք 'ի փառըս մեր ,
Գոչելով փառք մեր Հայկ ·

Հօր մերում հետեւեսցուք ,
Սերտ սիրովըն կապեսցուք ,
Արժանի յայնժամ լիցուք ,
Հայր կոչել մեզ ըզՀայկ ·

### ԵՐԳ ՚Ի ՁԱՅՆ

Թրոու դի Էֆրոռըլդ Վորդս Երգոյն Անգղիացւոց։

Ո՞ւր երթայց որոնել ,
՚Ի հովիտ թէ ՚ի ձոր .
Ո՞ւր երթայց գտանել ,
Զանուշակ կեանս անդորր ։

Երջանիկ կենաց ծառ ,
Անյողդողդ ցվլախձան .
Ցաշխարհէս ՚ի թշուառ ,
Ե՞րբ տեսաւ , յո՞ր անկեան ։

Թէ ելից ՚ի խնդիր ,
՚Ի պալատ Արքայի .
Թէ ելից ՚ի խնդիր ,
՚Ի տուն Շինականի .

Հաւասար տեսանի
Երկնային բաժանումն .
Մեծըն մեծ ցաւ ունի ,
Փո՛քր է ցաւ և փոքուն ։

Մխաքան ։ Ո՞ւր երթայց , մինչ ցո՞ր անկեան ։
Փառք , պատիւ , ճոխութիւն ,
Զառողջ կեանս , և որ են .

Կրճատ է Բախտի թեւն ,
Եւ Նախանձ պղտորէն ։

Իսկ բաժին աղքատի ,
Սիրտ և միտք անվրդով ·
Ընդ կորուստ՝ զոր չունի ,
Ոչ ցաւի հաշելով ։

Օ՛ն ուրեմն երջանիկ ,
Ծառ՜կենաց ՚ի յերկրի ,
Մի՛ երբէք համարիք ,
Մի՛ զմարդ՝ և ոչ մի ։

Չէ՛ք երբէք երջանիկ ,
Ծառ կենաց յայս երկրի ·
Որոնել թէ կամիք ,
Ճեպեսցո՛ւք ՚ի յերկին ։

Մխիթան Ուր երթայց ։

ԷՋՄԻԱԾԻՆ ։

ԷՋՄԻԱԾԻՆ Կաթուղիկէ Նորայս Սիոնի ,
Երկրորդ տապան երև եցաւ սրբոյն Գրիգորի ·
Լուսացնցուղ աղբեւր շնորհաց Հայաստան ազգի ,
Արբուցանէ ծարաւելոց շնորհիւն Յիսուսի ։

Էջմիածին զուշակեցաւ հինն Իսրայէլի ,
Խորհրդաբար անուանելով ասէ դուռն երկնի ·
Լուսացնցուղ և այն ։

Էջմիածին ջրհոր երդման Յակոբայ վեհի ,
Կենդանութեան աղբիւր բղխեալ՝ ի սմա տեսանի ·
Լուսացնցուղ և այն

Էջմիածին լեառն Սինա մեծին Մովսէսի ,
Սուրբ կտակարան Նոր օրինաց ՚ի սմա աւանդի ·
Լուսացնցուղ և այն ։

Էջմիածին վէմ յաղթութեան հանգիստ Մօսէսի ,
Յոր Ամաղէկ չար թշնամին պարտեալ գտանի ·
Լուսացնցուղ և այն ։

Էջմիածին տուն աւետեաց հնոյ օրինի ,
Զոր մարգարէն Նաբաւթ լեռնէն աչօք տեսանի ·
Լուսացնցուղ և այն ։

Էջմիածին հանգոյն փառաց Քորեբայ մեծի ,
Քաղցրութիւն յօդն անցանելով ՚ի սմա բնակի ·
Լուսացնցուղ և այն ։

Էջմիածին Կարմեղոս լեառըն Եղիսէի ,
Գեր քան ըզնա զօրք երկնային կան շուրջանակի ·
Լուսացնցուղ և այն ։

Էջմիածին Նոր Բեթղէհէմ այրին նմանի ,
Ծնեալ Աստուած աստ կրկնակի որպէս ծնանի ·
Լուսացնցուղ և այլն ։

Էջմիածին համանմանի Թաբօր Հերմօնի ,
Ցնծայ այսօր միանալով Որդւոյն Միածնի ,
Լուսացնցուղ և այլն ։

Էջմիածին յարկ լուսեղէն մեծին Գրիգորի,
Կամարաձև տեսանելով զօր կառուցանի ·
Լուսացնցուղ և այլն ։

Էջմիածին զարդ հոգևոր բազմաց ցանկալի ,
Տացէ շնորհ երգող երգոյս Տէր Ահարօնի ·
Լուսացնցուղ և այլն ։

## ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ։

Ա՛հ նոր օր փարելի նոր բարեկենդան ,
ՅԱստուածուստ՛ն վերուստ մեզ տօն ցնծութեն ·
Որ ուրախ ընդ սրտի տաս կեանըս մարդկան ,
Ուրախ սիրտ՝ ուրախ կեանք՝ քև տուատոնեան ։

Ա՛հ բարեաւ ծագեցար մեզ բարեկենդան ,
Կարապետ և պարէտ Նորահրաշ գարնան ·

Բն երկիր մերկանայ զիւր քօղ ձմեռան ,
Իսկ սիրտ մեր զմռայլ հոգւոց տխրութեան ։

Կեալ ապա և օրհնել ասէ մարգարէն ,
Զարարիչ յաւիտեանց՝ Աստուած մեր Որ Էն ․
Զի եթէ փառք են Նմա կեանք ազգի մարդկան,
Ապա կենաց փառք՝ աւուրք ցնծութեան ։

Իսկ Որդին Նորին տայ անձն իւր ժամուց ,
Զարժանին իւրեանց միշտ զպաշտօն և զործ ․
՚Ի կշիռ իմաստնոյն խնդութիւն և լաց ,
Կանոնօք կալան միշտ զտեղիս իւրեանց ։

Ապաքէ՞ն հրճուեսցուք եղբա՛րք միաբան ,
Սրբութեամբ կատարել մեր բարեկենդան ․
Եւ հանցուք Տուողին մեզ երանութեան ,
Զօրհնութիւն ՚ի քնարս անմահ խնդութեան ։

Այս զոլով և վեհիս մերոյ Օծութեան ,
Շնորհիս Յովհաննու Նար բարեկենդան ․
Խնդրեսցո՛ւք յԱստուծոյ պահել անսասան ,
Ընդ յոլով ընդ հոլովս ամաց ցնծութեան ։

## ԿԵՆԱՑ ԹԱՍ ։

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ բազմեալ եղբարց ,
Առջէ զուրախ գիւր կատարած .
Երբ բաժակաւ ազնիւ գինւոյ ,
Խնդրեմք կեանըս բարեկամաց ։
Լեց , Լեց , Լեց ,
Լեց Մատռուակ ,
Զուրախարար
Քոյ ըզբաժակ ։

Յայսըմ պարկեշտ խրախճանի ,
Երջանկութիւն մեր պսակի .
Երբ բարեգութ Արքայն երկնից ,
Յանմեղ աղերս մեր խոնարհի ։
Լեց Լեց , Լեց ,
Լեց Մատռուակ ,
Զուրախարար
Քոյ ըզբաժակ ։

Յաւելուլ մեզ երանութիւն ,–
Բարեկամաց մեր բարութիւն .
Եւ Տան Հայոց՝ Մօր աշխարհի ,
Ըղձեղափառ Նորոգութիւն ։

Լե՛ց, Լե՛ց, Լե՛ց,
Լե՛ց Մատռուա՛կ,
Զուարթարար
Քոյ զբաժակ :

Այս ապաքէն Պարոն——— .
Լցէ՛ անգին քո կենաց Թաս,
Եւ համօրէն ընտանեաց քոց,
Մեր հարազատ բարեկամաց :
Լե՛ց, Լե՛ց, Լե՛ց,
Լե՛ց Մատռուա՛կ,
Զուարթարար
Քոյ ըզբաժակ :

# ՅԱՒԵԼՈՒԱԾ :

## ԽԱՂՔ ԱՇՂԻՑ ՋՈՒՂԱՅՈՑ

### ՁԵՐ ՏՈՒՆՆ Ո՛ՐՏԵՂԱՅ :

Ա[illegible] ձեր տունն որ տեղայ,
Ասաց յԱրեւանովն արէ -
Տնաղէր քուչէն չղալատես,
Ուստայ խէրէվանովն արէ :

Մէր դուան յաջըրած տախտայ,
Խաչէրամ քաշէլ շատ վախտայ .
Ջուխտ գըմանն քարէ տախտայ ,
Էն նշանաբանովն արէ .

Ծմակ գըման որմատակէն ,
Բլանիքն այ ուրդէ ծակէն .
Վէր առ գըծէր քաշի փակէն ,
Տունն դաբ աջ գմնովն արէ .

Աջ գմանայ իմ օթախըն ,
Դէպ յարևելեան պուճախըն .
Տունն հաչի՝ ա՛ռ չօմախըն ,
Երկու երեք ջանովն արէ .

Ցարակու կլցնեմ թունդն ,
Կդնեմ փոսի պռուկն .
Վէր առ ածէր դրան կռունդն ,
Դուան բա՛ց՝ միանովն արէ ,

Ջուր ածէր կըրընդի ծակն ,
Զլըխըլըխկացանես դռան փակն .
Թաղիք կապէր ոտնէդ տակն ,
Վէր ել՝ բալախանովն արէ .

Ասի ես մի ղարիբ բի գուգարամ ,
Ասաց քեզ համար ճանխայ կճարեմ .
Մ՚եր դրկցնուն կապսպարեմ ,
Երբ դոս՝ էնտոնց տանոմն արճ .

Կգնամ կապսպարեմ իւրն ,
Ճամխայ տայ դոս մեր կտուրն .
Թէ վայվայի իմ սկեսուրն ,
Մի սիլլի բերանոմն արճ .

Բալախանէն օխտն լամբայ ,
Կամանց վերճւ չդմբդմբայ .
Ամիրօղլուս կառեն Թամբայ ,
Արզայ զրճր խանոմն արճ .

ԵՐԿՈՒ ԳԵՕԶԱԼ ՏԵՍԻ .

Էս օր երկու գեօզալ տեսի ,
Տիր ուրախ քարովին տալման .
Նարինջ տվի՝ ջուխտ յետ տվին ,
Մին էլ վերէն շահին տալման .

"Նարինջ տվին խաբխաբեցին ,
Տուն տարան փէտէրն յափեցին .

Զոգ զմնէ վերէս թափեցին ,
Համ աջ և համ ձախին տալման ։

Ընքան տղին խնացէլի ,
Ռանգս թռէլէր սևվացէլի .
Թէ մին էլ արևացէլի ,
Ջաղմ որ կուլէցս կախին տալման ։

Ես մինի իւրէնք չոքին ,
Սկեսրարին կըրըրոքին .
Երբ որ եկաւ էն անհոգին ,
Առանց հրեշտակ մահ էր տալման ։

Ինձ գձեցին մէջ մարանին ,
Վըրին կալէլ կոպալանին .
Ուզումին անաջալ անին ,
Բոմփ և չափալախին տալման ։

Սկեսուրն ինձ ծակծակէց ,
Տակըն դրէց կուլուլակէց .
Դէմըն ջրէրս դարտակէց ,
Դէմըն չափալախէր տալման ։

Ինձ կապեցին ծխայ պոչէն ,
Չի պուծաման էստոնց միջէն ,

Համ ղուռնին բռնել համ քուչէն ,
Մըգամ ճանապարհէն տալման ։

Ես ասի Ամիրօղլինամ,
Դեռ մին բօմփել տուէին ինամ ․
Քանի ասի մօրէ մինամ ,
Դեռ էլ չխտնես վազէն տալման ։

---

ՔՈ ՍԿԵՍՈՒՐՆ ԱԶԻ՛Զ ։

Եկ տես էսօր ինձ ինչ արար ,
Էդ քու սկեսուրն՝ ազիզ ․
Ինչ որ պիտէր ասինք իրար ,
Ինքըն ինձ , ես իւրն՝ ազիզ ։

Սկեսուրդ աչկերն խռզումայ ,
Երբ գոլմանամ բարկանումայ ․
Կռնէս բռնում շպրտումայ ,
Գձում տռուռի Ջուրըն ․ ազիզ ,

Ըն տռուռի ցեխ Թմբերոճը ,
Ես հետ իմ ընկերոճը ․
Հաշտի միջի լամբէրոճը ,
Ջախտ ելայ կտուրն՝ ազիզ ։

Կտուրն ելայ դուռն փակեց ,
Աթարոցըն վեռեց թակեց .
Վէր դձեց ջանըս ծակծակեց ,
Դանակ կէր խտուրըն ազիզ .

Համ կծակէր համ կկծէր ,
Համ յետ կըտառնէր կանիծէր .
Ուզումէր արունս ծծէր ,
Էդ բիմօրվաթ քաֆէրն՝ ազիզ .

Էդ քաֆէրն տէր ղօչաղէր ,
Դեռ լէվ էր որ նաչաղէր .
Ուզումէր ջանըս դաղդաղէր ,
Բերէլ էր շամփուրըն՝ ազիզ .

Շամփուրն տաքցանումէր ,
Ինձ ընդիղ չօքցանումէր .
Տեսի հաղորդ սպանումէր ,
Դուրսէր քաշէլ թուրըն՝ ազիզ .

Ճարս կտրէց աղաչեցի ,
Չօք անգամ ձեռըն պաչեցի .
Ճրագըն վառ էր փչեցի ,
Վազ տվէ՛ դէպ դուռըն՝ ազիզ .

Վազտ վէց յետնէս և կանչէց ,
Դէմն բօմիրէց՝ դէմն չանչէց ·
Մթին հաշտին դռր ճանանչէց ,
Բընազամ շհուրըն՝ աղէղ :

Եկաւ բռնէց մթին հաշտին ,
Վեր կոխէց թ.քէց իւր մշտին ·
Ամիր օղլուս կող ու կշտին ,
Տվէց մինչ խէրուըրըն՝ աղէղ :

### ԻԴ ՊԱՌԱՒՆ :

Շուն պառաւն էս ի՞նչ արաւ ,
Իւր մարդին խաբով տուն տարաւ ·
Ինչ որ ուզէյ , նա էն արաւ ·
Էն անիծած շուն պառաւն :

Իւր մարդին տվէց դեղն ,
Խաբով ղրկէց յերկար գեղն ·
Մարդից գաղտնի կերաւ եղն ,
Էն անիծած գող պառաւն :

Մարդն յետ եկաւ գեղեցն ,
Պառաւն բռնէց բեղեցն ·

Դուս տրար մարդէն տանէյն ,
Հաչհաչան քօփակ պառաւն ։

Պառաւն կթակէր շանն ,
Հարգիզ չէր առում տան բանն ․
Կուտէր եօթըն դիգըր թանն ,
Շատակեր քօփակ պառաւն ։

Մարդէ գլխէն կածէր խոշն ,
Ջըբէյն կգոշանէր փոշն ․
Սուտ կասէր ըռնէց իմ դոշն ,
Սուտասան ջխուտ պառաւն ։

Յարակուն որ գէր մուխն ,
Նօքար ունէր օխտն՝ ութն ․
Երբ կըգէն պառաւի մօտն ,
Շատ կուրախանէր պառաւն ։

Ողջի հետ ղումար կխաղէր ,
Հազար՝ հարիւրով կտանէր ․
Մաղզաքի կտէր կծամէր ,
Ղումարբազ քօփակ պառաւն ։

Մարդէ միրուքն էր նա խուզում ,
Ձեռնէրով աչքէրնէր բզում ․

Սիրտն ջահէլ մարդէր ուզում ,
Չէ՞ր ամաչման շուն պառաւն ։

Իւր խօսքն արաւ գնաց ,
Մին ջահէլ մարդ արաւ խնդաց ․
Ծոխացաւ վերէն թռթռաց ,
Էդ մեր քօփակ շուն պառաւն ։

Խարսանքէն պատիւ տրաւ ,
Ողջ մարդկանց սուտն տարաւ ․
Ինչ որ եփէց ինքն կերաւ ,
Քաղցած թողէց դև պառաւն ։

Ամիր օղլի չէ՞ւր Էրբ կասես ,
Մեր պառաւին կըամբասես ․
Թէ դու գընաս դրխտն ասես ,
Կկատաղի շուն պառաւն ։

ԽՐԱՏ ։

Ե՛կ իմ անդադար սէրս՝ քեզի տամ օգուտ ,
Գիշեր ցէրէկ քու փառքն տուր համիշայ ․
Փառքտուր Աստուծոյ, առ ողորմութիւն
Դրխտ պահէ՛ր քո շարթ եղրար լսուննըն ։

Ընչափ կացեր մինչ քոյ դատըն գայ քոդուռն,
Վերա՛ւ, տուն տա՛ր մէհրէբան աղաթով.

Մէհրէբան աղըթն արա՛ երթայ ամաչի,
Գնայ իւր դօստ ու դիշնամն ճանաչի.
Ընչափ կացեր մինչ քոյ դատըն քեզ կանչի,
Յայնժամ վեր կա՛ց գնա՛ ջօւաթով.

Ջօւաթն նամարդին չէ՛ տղամարդիննայ.
Զունքի ինքն իւր եղբարու շարթինայ.
Իմանողի քշտին խաֆաթն մնայ,
Ըլ ծակես դանակով, չըտաս քաղաթով.

Քաղաթով տալըն խաֆաւ չի դուշնամին,
Ուսուլով պիտի խանել նորա պնչի քամին.
Թալաբ ունես արդ մի՛ անել հաքիմին,
Խտուրն սազլէր՝ յինքառ դաֆաթով.

Դիաֆաթով յինքառնելն մի տալ թաղաֆուլ.
Ջլաբն պիրկ պախիր, չնի թողուս թուլ.
Յաւէջ խօշի ասա՛ թէ չանի դարուլ,
Յետոյ խտուրն խօսէր յուղաթով.

Ցուջաթի տակ մի գձել քո բանն ,
Թող գնայ պռծուցանի եւրջանն .
Թէ ուզում աս գլուխ տանես քոյ բանն ,
Ապա կայացրուր սալը ու Թաղաթով .

Առանց համբերութեան դու բան մի առնել ,
Օտար ձեռթով քոյ Ճրագն մի վառել .
Նօվ քեսայ մարդի հետ սօվդայ մի առնել ,
Եթէ քաղցած մնաս օրով շաբաթով .

Օրով շաբաթով դուզն մնալն մանէ չէ ,
Ով կասի Նօվ քեսայ մարդն վնաս չէ .
Մին յինք առնես՝ տասն յետ տաս՝ ղանէ չէ ,
Մոհասիլ կընէ ղարզ ու բարաթով .

Մոհասիլ կըբերի դուռըդ կքնի ,
Ոչ ուր չէ գնալ , տանէրն կխլնի .
Գիտուն դրկցին գէրի լինես լաւ կլինի ,
Քան անգէտ եղբօր հետ նստես սօհբաթով .

Անգէտ եղբօր սօհբաթն շատ վատայ ,
Թալաքում կդնի խաֆաթըն շատայ .
Իմ սիրելի՛ սոքա բոլորն խրատայ ,
Անկաջումըդ պահէր կաց զգուշութեամբ .

ԲաղչէրՕղլի դու լէւ կացէր՝ լէւ արձ ,
Ես խբարամ վատ մարդոյ տեղն խաւարայ ·
Խօսքերդ իմացէր , հարգայ մի փարթաւել
աւարայ ,
Եփէր կուլումըդ՝ ասմ փասանդում :

## ՈՉԽԱՐ ԵՒ ԳԱՅԼ.Ն :

Ցուրար հետ բաս արին Ոչխարն և Գէլն ,
Ոչխարն ասաց՝ մօտս պահապան ունեմ ,
Ձեռ քաշէր ինձանից , կտրէր քո մէլն ,
Դու ես անտէր գազան , ես չօբան ունեմ :

Գէլն ասաց՝ չօբանիդ մոտէն դէս արէ ,
Երթանք էն փոս ձորն, քեզ հետ բան ունեմ ·
Գեղեցիկ ծաղկունքըն բացուէլան սարին ,
Արէ տես ինչ լաւ տեղ օթեւան ունեմ :

Ոչխարն ասաց՝ ես չեմ գալէց քո մօտն ,
Ո՛չ քոյ ծաղիկն կուզեմ, ո՛չ քոյ փիս խոտն ·
Չօբանս հաստատ լինի՝ ձեռնի պարսատըն ,
Իմ թշնամու համար աչկահան ունեմ :

Գէլն ասաց՝ ես մի մեծ անմի տէր եմ ·
Շատ ձեռնաբաց ղօնաղասէր եմ ·

Թէ գաս մօտս՝ ինչ սիրտդ կուզի կբերեմ,
Բուռումայ ունեմ, դարման ունեմ, դան ունեմ։

Ոչխարն ասաց՝ դանըն ծուատիցայ սարին ,
Վօր և ցանքն ով տվէց քեզ պէս բադքարին·
Աստուած տէրս պահի՝ ուտի իմ բարին ,
Խուռմսեր ունեմ, կարաք ունեմ, թան ունեմ։

Գէլն ասաց՝ էդ ձեր գլխակեր շունն ,
Մի գիշեր չէ թողնում ընկնեմ ձեր տունն ·
Որ քեզի ղօնաղ տանեմ իմ բունն ,
Տեսնես ինչ գեղեցիկ՝ լաւ խիզան ունեմ ։

Ոչխարն ասաց՝ ոչ մեծանայ քո ձագըն ,
Նա էլ էր գունչն բերում դէպ իմ գմակն ·
Քիզնից ինչ կասուորի քոյ յիշատակն ,
Ամէն տեղ քեզ պէս չար դուշման ունեմ ։

Գէլն ասաց՝ եթէ ձագիցս նեղանաս ,
Կերթամ կասեմ, քեզ հետ չանի բաղըմաս ,
Երեխիս խաղալն մոթլաբ կմնաս ,
Մ՛ի անիծանել՝ ես մի սիրական ունեմ ։

Ոչխարն ասաց՝ անիծածայ քո ցեղըն ,
Ընդունրան դժուարել խօլ խալայեղըն ,

Ինքան վատ էք որ խարաբէնայ ձեր տեղն ,
Ես եմ լաւ , որ տէր և տիրական ունեմ ։

Գէլն ասաց՝ Աստուած քանդէ տրոջդ տունն ,
Դու խօմ յուսացէլաս էտ անիծած բունն ․
Նա սարայի մեռնի՝ դու յիրիկունն ,
Ինձ մի խօսացանել՝ վատ բերան ունեմ ։

Ոչխարն ասաց՝ չլինի վատ բարեկամն ,
Թէ ճգնաւոր դառնաս՝ չեմ գոլ քոյ ժամն ․
Երբ որ միտս կգոյ քոյ գարշ ատամն ,
Կփախեմ որչափ ջանումս ջան ունեմ ։

Գէլն ասաց՝ յերբ որ սարայէն դուրս ես գալիս ,
Երկու աչքերիցս արիւն է լալիս ․
Իլայիմ որ դմակդ շօրօր ես տալիս ,
Հէնց գիտեմ մի խանում խաթուն ջան ունեմ ։

Ամիր Օղլի Ինչայ խօսքերդ պատճառն ,
Սատանէնայ Գէլն՝ բանդէնայ Գառն ․
Մարդ պէտի մտածի իւր բարի՝ չարն ,
Ցիմանայ էն կենացն չար դուշման ունի ․

Զ.

## ԵԱԼԱԼԻ

ԵԱԼԱԼԻ, հայ ջանիման ջանիման,
Եա՛լալի ջախտ ալալին ջանիման.
Եա՛լալի պատկերըդայ աննման,
Եա՛լալի դէմք քո պայծառ փայլման։

Եա՛լալի, գլխիդ գաթաղուտ թէլն,
Եա՛լալի դու աս իմ սրտի մէջն.
Եա՛լալի գըլփէրըդայ աննման,
Եա՛լալի գլխովդ պատատ գոլման։

Եա՛լալի, մանդիլըդայ նախըման,
Եա՛լալի թշէրդ պայծառ փայլման.
Եա՛լալի յունքերըդայ թաղ տուած,
Եա՛լալի սրտիս մէջն դաղ տուած։

Եա՛լալի աչքեր ունես ջէրանի,
Եա՛լալի տեսնողի խելքըն տանի.
Եա՛լալի երբ որ իշարաթ կանես,
Եա՛լալի սրտիս մէջ կըղչաղես։

Եա՛լալի, արարաթով գըուցա տաս,
Եա՛լալի սիրով սրտիս նստածաս.

Եա՛լալի կեռւքնիդ մարգարիտայ ,
Եա՛լալի տասն չորս տարիդ Թամամայ ։

Եա՛լալի , մատնումդ լէ՛ մատանի ,
Եա՛լալի ինձ լայեղաս՝ ա՛վ կտանի ․
Եա՛լալի ձեռնիդ ոսկէ աբըրջան ,
Եա՛լալի քո անուշնայ Մարիամջան ։

Եա՛լալի , աշրաւիէքդ ալմաղայ ,
Եա՛լալի ինչ շարթ կտաս արաղայ ․
Եա՛լալի ձեռնէրըդ նաշխուն խնած ,
Եա՛լալի խելքսայ խելագարած ։

Եա՛լալի , ոտնումդ ոսկէ խալխալ ,
Եա՛լալի խազիդ գաւընն մալմալ ․
Եա՛լալի ոտնէրըդ կարմիր խնած ,
Եա՛լալի տեսողանիէն մոլորած ։

Եա՛լալի , սիրուն սուրայի գարդան ,
Եա՛լալի շուռաս եկէլ Հնդստան ․
Եա՛լալի քեզ սիրումամ սրտովս ,
Եա՛լալի որ միշտ վեռուըս բարովս ։

Եա՛լալի, բօյըդ նման սալբի ծառ,
Եա՛լալի ուզումամ քեզ անդադար.
Եա՛լալի մէջկումըլէայ Զարքաղի,
Եա՛լալի քո տեսնողին երանի։

Եա՛լալի, խելօք անձանց միջումնաս,
Եա՛լալի գոլելի մէջլըսումնաս.
Եա՛լալի մեզ ճուստ էր եդպէս բախտն,
Եա՛լալի որ նստինք էսպէս թախտն։

Եա՛լալի, նասիբ լինի քամբախտին,
Եա՛լալի կենի մինչ միւս տարին.
Եա՛լալի գիշերէք ես անքունամ,
Եա՛լալի ես քո սիրէն զարթունամ։

Եա՛լալի, սպանեց էդ նոր խալն,
Եա՛լալի եկ տես իմ սրտի հալն.
Եա՛լալի մանաս զոլման կտելն,
Եա՛լալի որ ցոյց տաս քո պատկերն։

Եա՛լալի, էս ինչ բանէրամ լսում,
Եա՛լալի որ քեզ վերայան ասում.

Եճլալ՝ քո տարերքն շատ փոքրայ ,
Եճլալի քո խօսքերն շատ քաղցրայ ։

Եճլալի , ասմունքանխէ շարբէշար ,
Եճլալի ուզումամ քեզ անդաւար ·
Եճլալի մեծ յուսով ես կըսպասեմ ,
Եճլալի որ քեզի ես գտանեմ ։

Վ. ԱԽՃԱՆ

1894

1. [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

2. [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

3. [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

---

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹ…
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՑԱՆԿ


Ամուսնութիւն .................... 1
Անուշահոտ վարդի Տերև .................... 47
Աշակերտաց հրաման տայցուք .................... 51
Աշնան Առաւօտ .................... 26
Ա՛ռ զաւել .................... 24
Ա՛ռ զամբիւղ .................... 24
Առ ո՞ւմ դիմեմ .................... 7
Ասէ Բնութիւն .................... 8
Բաժանումն սիրահարաց .................... 40
Բարեկենդան .................... 75
Բացուի՛ր Բացուի՛ր .................... 62
Բլբուլն եկեալ .................... 57

Գէթ յերազի .................... 21

Եալալի .................... 92
Եկա՛յք առ որս երթամք .................... 14
Երգ Բիւլբիւլին .................... 43
Երկու գօզալ տեսի .................... 80

Երջանիկ վարդ ........................ 13
Ես ձեզ ցանկամ ........................ 2

Ձայն զոր ունիմ ........................ 12
Էդ պառաւան ........................ 84
ԷՋՄԻԱԾԻՆ ........................ 73

Թո՛ղ զի խաւայէ ........................ 11
Լոյս աչաց կարօտիմ ........................ 18
Լո՛ւր ինձ Աղջիկ ........................ 16
Խրատ ........................ 86
Խօսեա՛ց ճիկ ճիկ ........................ 66

Ծագեցար ........................ 45
Կեանք Ուրախութեան ........................ 9
Կեանք Պանդխտութեան ........................ 20
Կենաց Բաս ........................ 77
Կենաց իմ յոյս ........................ 17

Հայկերգ ........................ 70
Հոգւոյս Տիկին ........................ 23
Ձեր տունն ո՞ր տեղայ ........................ 78
ՄԱՅՐ ՑԱՆԿԱԼԻ ........................ 69
Մանուկ քաղցրագոյն ........................ 61
Մնա՛յք բարեաւ եւ գնայի ........................ 67

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0678179

5ч-9-
153